



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԻՐԱԿԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱԿԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ  
ԻՐԱԿԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺՎՆԱԾՈՒՅՔ

**«ՓԱՍՏԱԲԱՆԻԹՅՈՒՆ.  
ԱԵՐԿԱ ՎԻճԱԿԸ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՂԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՊԵՏԾՈՒՆՈՒՄ»**

**ԻՐԱԿԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԴԱՏԱՊԵՏԱԿԱՆ 2-ՐԴ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ**

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն**

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	4
<b>ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ</b>	
Ներածություն .....	6
Օրինականության վիճակը երկրում՝ որպես փաստաբանական գործունեության արդյունավետության չափանիշ .....	7
Փաստաբանության դերը անցումային պետությունում առկա պրոբլեմների լուծման գործում .....	9
Ով պետք է «Էլեկտրադրում» իրականություն դարձնի .....	12
Օգտագործված գրականության ցանկ .....	17
<b>ԼԻՀԻԹ-ՔԱՍՍԱԼՅԱՆ</b>	
Ներածություն .....	18
Փաստաբանական էթիկայի ընդհանուր բնութագիրը, կազմակորումը և կառուցվածքը .....	19
Փաստաբանական էթիկայի հիմնական սկզբունքները և դրանց կիրառման գործնական հիմնախնդիրները .....	21
Վերջարան .....	35
Օգտագործված գրականության ցանկ .....	36
<b>ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ</b>	
Ներածություն .....	37
Նկարագրական մաս .....	39
Եզրափակիչ մաս .....	45
Օգտագործված գրականության ցանկ .....	47
<b>ԽԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	
Ներածություն .....	48
Նկարագրական մաս .....	48
Փաստաբանական էթիկա .....	57
Եզրափակիչ մաս .....	58
Օգտագործված գրականության ցանկ .....	59
<b>ՊԵՐԾ ԽԱԶԱՏՐՅԱՆ</b>	
Ներածություն .....	60
Փաստաբանական ծառայությունը խորհրդային Հայաստանում .....	62
Փաստանարանությունը Հայաստանի նորանկախ հանրապետությունում ....	65
Օգտագործված գրականության ցանկ .....	68
<b>ՀԱԿՈԲ ՔՈՅՑԼՈՅՅԱՆ</b>	

Ներածություն .....	69
Փաստաբանության մասին օրենքում առկա բացթողումներն ու անհրաժեշտ լրացումները	70
Փաստաբանության ներկա վիճակը հասարակության գնահատմամբ .....	72
ՀՀ-ում ընտանեկան փաստաբանի ինստիտուտը՝ որպես զարգացման նոր հեռանկար	73
Ընտանեկան փաստաբանի ինստիտուտի կառուցվածքը .....	75
Ընտանեկան փաստաբանի գործունեության նպատակահարմարությունը իրավական և ֆինանսական առումով .....	76
Ընտանեկան փաստաբանի ինստիտուտը՝ որպես զարգացման հեռանկար հասարակության գնահատմամբ .....	77
Եզրափակիչ մաս .....	77
Օգտագործված գրականության ցանկ .....	79

## **ՆՈՐԱՅԻ ԱՐԴԱՐՅԱՆ**

Ներածություն .....	80
Նկարագրական մաս .....	81
Եզրափակիչ մաս .....	86
Օգտագործված գրականության ցանկ .....	88

## ՆԱԽԱԲԱՆ

Յայտնի է, որ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում առնձնահատուկ տեղ է գրավում փաստաբանությունը՝ որպես իրավապաշտպան հնագույն ինստիտուտ: Այս կարևորագույն կառույցի արդյունավետ կազմակերպումն ու գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է: Ուստի փաստաբանական գործունեությունը կարգավորող օրենսդրության մեջ հակասությունների բացակայությունը և հստակ ու անթերի ձևակերպումների սահմանումը, որոնք թույլ կտան բոլոր հնարավոր թույլատրելի իրավական միջոցներով՝ ապահովել մարդու իրավունքների ու օրինական շահերի պատշաճ պաշտպանությունը, յուրաքանչյուր ժողովրդավարական պետությունում լուծման ենթակա խնդիրներից է:

Ժողովրդավարական, իրավական պետության կառուցման ճանապարհին Յայաստանի Հանրապետությունում անընդհատ անհրաժեշտություն է առաջանալու վերանայելու և կատարելագործելու գործող օրենսդրությունը: Յասարակական հարաբերությունների զարգացման արդի փուլում, եթե ընթանում են ժողովրդավարացման, հումանիզմացիայի և մարդու իրավունքների պաշտպանության բազմարնոյթ գործընթացներ, առավել իրատապ է դառնում իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող օրենսդրության համապատասխանեցումը ժողովրդավարական պետությանն ու քաղաքացիական հասարակությանը բնորոշ որակներին: Յատկապես, եթե խոսքը վերաբերում է փաստաբանական գործունեությունը կարգավորող օրենսդրությանը, ապա առանձնակի է կարևորվում այս ինստիտուտը կանոնակարգող կատարյալ օրենսդրության ձևավորման ու դրա արդյունավետ կիրառման խնդիրը:

Բոլորովին վերջերս, ինչպես հայտնի է, բազմաթիվ փոփոխություններ կատարվեցին Յայաստանի Հանրապետությունում փաստաբանության ինստիտուտի բնագավառում կապված 2004 թ.-ին ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքի և դրա հիման վրա այս ինստիտուտում կատարված բարեփոխումների հետ: Խոսքը վերաբերում է փաստաբանական պալատի՝ որպես ՀՀ-ում բոլորովին նորաստեղծ կառույցին, որի ձևավորման հետ կապված գործընթացները դեռևս չեն հասել իրենց տրամաբանական ավարտին:

Գիտաժողովի նպատակն էր «Փաստաբանության մասին» նոր օրենքի դրույթների վերլուծության և համեմատական հետազոտության հիման վրա այդ դրույթներում առկա թերությունների և բացքողումների բացահայտումը և դրանք վերացնելու համար հիմնավորված առաջարկությունների և հիմնախնդիրների գործնական լուծման արդյունավետ ուղիների մշակման փորձը: Գիտաժողովը նպատակ էր հետապնդում նաև իրավաբան ուսանողների շրջանում անցակցնել գիտական քննարկում՝ փաստաբանների միասնական պալատի ձևավորման և ստեղծված իրավիճակից դուրս գալու առնչությամբ:

Սույն գրքույկում ըստ գիտաժողովի գրավոր և բանավոր փուլերի միավորների ամփոփման արդյունքների՝ հերթականությամբ զետեղված են գիտաժողովի լավագույն գեկույցները: Նախատեսվում է սույն ժողովածուն անվճար տարածել Երիտասարդ իրավաբանների և փաստաբանների շրջանում:

Կարծում ենք՝ իրավաբան ուսանողների ներգրավվումը վերոնշյալ գործընթացներին իր դերն ու նշանակությունը կունենա Յայաստանի Հանրապետությունում իրավապաշտպան կազմակորումների բնագավառում անհրաժեշտ բարեփոխումների իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության գործում:

## ԱՍՍԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

### Ներածություն

Սույն աշխատանքում փորձ է արվել քննարկել մի շաբթ հիմնահարցեր, որոնց լուծումը, իմ կարծիքով, կնպաստի մեր երկրում փաստաբանության ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը: Նրանում շարադրված են իմ մոտեցումները փաստաբանության՝ որպես քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկի կառուցման արդյունավետ ուղիների վերաբերյալ: Սույն աշխատության մեջ անդրադարձ է կատարվել անցումային պետության ճգնաժամի առաջացման պատճառներին, ինչպես նաև փորձ է արվել տալ դրանց լուծման հնարավոր տարրերակները:

Մեր երկրում փաստաբանության ինստիտուտի կառուցման հիմքերն այսօր են դրվում: Մասնավորապես այդ է վկայում 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը: Այն, հիրավի, նշանակալի իրադարձություն է Հայաստանում փաստաբանության ինստիտուտի գարգացման գործում, բայց չափային է մոռանալ, որ առջևում դեռ շատ անելիք կա:

Նոր օրենքի ընդունմամբ փաստաբանական գործունեության մեջ նոր փուլ է սկսվել, որի հիմնական խնդիրը փաստաբանության՝ նոր որակի անցման, հռչակված անկախության պայմաններում փաստաբանության արդյունավետ գործունեության երաշխիքների ապահովումն է: Բացի այդ, պետք է կարողանալ պաշտպանել այդ անկախությունը տարրեր բնույթի ոտնագություններից:

Օրենսդրական բարեփոխումն, ինչ խոսք անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Բացի փաստաբանային ձևակերպումից անհրաժեշտ են գործնական իրավակիրառ քայլեր, այլապես օրենքը դեկարատիվ բնույթ կկրի: Սրանից խուսափելու համար պետք է ձևավորել պատշաճ իրավակիրառ պրակտիկա: Աշխատության մեջ արվել են որոշակի դատողություններ նաև այս հարցի կապակցությամբ: Մասնավորապես խոսվել է փաստաբաններին ներկայացվող մասնագիտական ու անձնական որոշ հատկանիշների կարևորության մասին և զուգահեռներ են տարվել վերջիններին առկայության և փաստաբանության ինստիտուտի կայացման միջև:

### Օրինականության վիճակը երկրում՝ որպես փաստաբանական գործունեության արդյունավետության չափանիշ

Այսօր քաղաքակիրթ աշխարհի գորեք բոլոր պետությունների առջև կանգնած է, կարելի է ասել, գերխնդիք՝ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն: Եթե ընդունենք, որ 1948թ. դեկտեմբերի 10-ին ՍՍԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Մարդու իրավունքների համբուղանուր հռչակագիրը» ժամանակակից ժողովրդավարական պետությունների օրենսդրական զարգացման մի յուրօրինակ ուղեցույց է, ապա անհրաժեշտ է հիշել նրա հիմնական պրատուլատները. «...Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է...».

...Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով...

...Յուրաքանչյուր ոք ունի սույն Հոչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները...»:

Սակայն այս իրավական դրույթների գուտ փաստաբանային ամրագրումը դեռևս բավարար չէ: Բավարար չէ նաև ներպետական օրենսդրության, մասնավորապես, Սահմանադրության՝ այդ հենքի վրա կառուցումը: Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է, որպեսզի ստեղծվեն վերջիններս առօրյա կյանքում և հատկապես իրավապահ համակարգի հետ հարաբերություններում իրականացնելու հստակ և գործուն երաշխիքներ: Այդ երաշխիքների թվին են դասվում իրավապահ պրակտիկայի պատշաճ մակարդակի պահանջումը, անհատին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու իրական հնարավորությունը, օրինականությունն ու իրավակարգը:

Մեր խնդիրն է պարզել փաստաբանության ինստիտուտի դերը դրանց կյանքի կոչման գործում: Պարզ է, որ իրավունքի հեղինակության անկումը բուլացնում է անձի օրինական շահերի

պաշտպանության օրինական միջոցների արդյունավետությունը: Անձի իրավունքների պաշտպանության համար մղվող պայքարը տեղափոխվում է «ստվերային» արդարադատության ոլորտ: Առաջին պահու են դուրս գալիս ուժային մեթոդները՝ ճնշում, «ծանրություն», կաշառք: Կարծում եմ, կարիք չկա նշելու, որ այս պարագայում զանգվածաբար խախտվում են փաստաբանի մասնագիտական էրիկայի կանոնները:

Բնականարար, այս արատավոր երևոյթը հանգեցնում է փաստաբանի մասնագիտության նկատմամբ հարգանքի և, ամենակարևորը, հավատի կորսույան: Փաստաբանը հանդես է գալիս զուտ որպես իրավունքի սուբյեկտի և կոռումպացված իրավապահ համակարգի միջև կապող օղակ՝ միջնորդ:

Իսկ միջնորդը որպակապես նոր հասկացություն է իրավապահութան համակարգում: Նրան անհրաժեշտ չեն փաստաբանի մասնագիտական հմտություններն ու կարողությունները, նա պարտավոր չէ տիրապետել հոեստրական արվեստի նրբություններին, չունի հղկված իրավական դիրքորոշումներ: Ի տարբերություն «փաստաբանության»՝ «միջնորդությունը» իրավական ինստիտուտ չէ:

Եթե ամփոփենք վերոգրյալը, ապա կիանցենք այն պարզ եղանակացության, որ երկրում փաստաբանության ինստիտուտի հիմքը դնելու և դրա հետագա զարգացումն ասպահովելու համար անհրաժեշտ է երկրում հաստատել իրավունքի գերակայության, օրինականության ռեժիմ: Վերջինս էլ, ինչպես հայտնի է, ճգնաժամ է ապրում անցումային ժամանակաշրջանում, և դրա պատճառները բազմազան են:

Տեսարանների մի մասի կարծիքով երկրում օրինականության վիճակն առաջին հերթին որոշվում է այդ երկրի դատական և դատախազական մարմինների կողմից անձի իրավունքների պաշտպանությամբ, քանի որ նրանք են կոչված պրակտիկայում կիրառելու օրենսդրի ընդունած նորմատիվ իրավական ակտերը:

Տեսարանների մյուս խումբն էլ պնդում է, որ անարդար է երկրում օրինականության ճգնաժամի առաջացման մեջ մեղադրել միայն իրավակիրառ նարմնին, առավել ևս, որ վերջինիս համար ավելի դժվար է կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները անցումային ժամանակաշրջանի «գերլարված» պայմաններում: Նրանք գտնում են, որ իրավական նիգիլագմի առաջացման ավելի խոր պատճառներ կան, որոնք բարենպատճեն են տվյալ երկրի բնակչության հոգեբանական առանձնահատկություններում:

Կարծում եմ, որ վերոնշյալ երկու մոտեցումներն ել չափազանց ծայրահեղական են: Անհնար է, որ անցումային ժամանակաշրջանի ճգնաժամի առաջացման պատճառը լինի միայն այս կամ այն կոնկրետ երևոյթը, և միայն որոշակի հարցի լուծմամբ հնարավոր լինի վերացնել այրորեմը:

Անցումային ժամանակաշրջանի ճգնաժամը գլորալ խնդիր է՝ կազմված մի շարք իրավական, քաղաքական, քարոյահոգեբանական հիմնախնդիրներից, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է յուրահատուկ մոտեցում: Ինչ խոր, երկրում օրինականության ռեժիմ հաստատելու համար անհրաժեշտ է քաղաքական կամք, հստակ պետական կարգապահություն բոլոր՝ այդ քում դատական և իրավապահ մարմինների գործունեության մեջ: Ինչու եմ առանձնացնում հատկանի այս երկու համակարգերը, որովհետև դրանց գործունեության հստակ կարգավորմամբ հնարավոր է հասնել «կանխատեսելի» և հիրավի արդար վճիռների կայացմանը: Եվ այդ պարագայում հասարակության մեջ կձևավորվի հարգանք իրավունքի, օրենքի նկատմամբ: Իսկ վերջինս հետևանքն է կինի այն, որ պրոֆեսիոնալ իրավական օգնությունը կրադարի եպիգորիկ բնույթ կրել փաստաբանական պրակտիկայում, այլ կրտսնա հասարակության իրավական կյանքի անբաժան մաս:

Չի կարելի միանցանակորեն ժիստել նաև հարցի հոգեբանական կողմը: Իրավագիտակցությունը մեծ դեր է խաղում իրավունքի նորմը կիրառելիս, իսկ իրավագիտակցության մակարդակը պայմանավորված է երևոսի մշակութային, կրթական, քարոյահոգեբանական առանձնահատկություններով: Ինարկե, պետք է աշխատանքներ տանել այս ուղղություններով՝ ներմուծելով դարձողներում ու ԲՈՒՀ-երում (խոսքը ոչ իրավաբանական ԲՈՒՀ-երի ու ֆակուլտետների մասին է) համապատասխան կրթական ծրագրեր՝ աշխատանքներ տանելով հասարակության լայն զանգվածներին (հատկապես ՀՀ մարզերում) հաղորդակից դարձնելու իրավական մշակույթին ու արժեքներին:

Բայց չպետք է մոռանալ, որ ճգնաժամի առաջացումը պայմանավորված է մի շարք այլ քաղաքական երևոյթներով, որոնցից են ընթացիկ օրենսդրության և հանրային պահանջմունքների անհամապատասխանությունը, իրավունքի տարբեր ճյուղերի բնագավառներում կատարվող դատախազական քարեփումների անհամաշխափությունը, օրենսդրության և նոր նորմա-

տիվ նյութի ռեալիզացման տնտեսական հնարավորության անհամապատասխանությունը, իրավական և պետական ինստիտուտների հանդեպ վստահության կորուստը, հատկապես անկախ դատական համակարգի գոյության բացակայության պայմաններում, արտակարգ և ժամանակավոր օրենսդրության հիվերտրոֆիան, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ենթակարգության խախտումը, իրավակիրառ ոլորտում կամայականությունների տարածումը և այլն, և այլն:

## Փաստաբանության դերն անցումային պետությունում առկա պրոբլեմների լուծման գործում

Տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների առաջացումը պահանջում է նոր մոտեցումներ, իրավական կարգավորման նոր մեխանիզմներ՝ ուղղված ավելորդ վարչական միջամտությունից դրանք գերծ պահելուն:

Առաջինը օրենսդրի խնդիրն է, իսկ երկրորդը՝ փաստաբանության, քանի որ միայն նա է ի վիճակի ապահովել հնարավոր ծագելիք վեճերի խաղաղ, քաղաքակիրք լուծումը: Փաստաբանի այս առաքելության կարևորությունը ակնառու է հատկապես բիզնեսի (գործարարության) ոլորտում, գործարար-պետություն հարաբերություններում: Այս հարաբերությունների ճիշտ կառուցմանը միայն կարելի է հասնել երկրում շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորմանն ու կայացմանը:

Այս ոլորտում փաստաբանի խնդիրն է կանխել տարբեր պետական մարմինների կողմից իրենց լիազորությունների շարաշահումները: Քանի որ, առանց որևէ իրավական հիմքի տնտեսական կառուցման տնտեսական կյանքի մեջ նրանց ներխուժումը ուղղակի քայլայում է վերջիններս:

Փաստաբանի կողմից իր այս խնդիրի իրականացման նորմատիվ հիմքեր կան 2004թ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում: Վերջինիս երրորդ հոդվածի համաձայն այն մասնագիտական միավորում է և չի նտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Սրանով օրենսդիրը «ազատագրել» է փաստաբանությանը՝ հնարավորություն տալով նրան պայքարել պետական համակարգի անօրինականությունների դեմ:

Անցումային ժամանակաշրջանի ճգնաժամի առաջացման մյուս հիմքը պետական կարգավորման մեխանիզմի բարդացումն է: Դա ևս կապված է նոր հասարակական հարաբերությունների առաջացման, եղած արտադրական հարաբերությունների զարգացման հետ: Ինչ խոսք, սա բնականոն պրոցես է, որը սակայն պրակտիկայում որոշակի բարդություններ է առաջանում: Քաղաքացին, լինի նա անհատ ձեռներեց, իրավաբանական անձի տնօրեն, թե պարզապես որոշակի անշարժ գույքի սեփականատեր, ուղղակի չի հասցնում ուսումնասիրել բոլոր այդ ակտերը կամ ել դժվարանում է ընկալել դրանցում օգտագործվող որոշ իրավաբանական եղույթներ:

Այս խնդիր լուծման պարտականությունն ամբողջությամբ դրված է փաստաբանի վրա:

Հաջորդ երկու հիմնախնդիրները, որոնց հետ «քախվում է» անցումային պետությունը, մարդու իրավունքների պետական պաշտպանության բոլորում է և կոռուպցիայի աճը:

Նախ առաջինի մասին, անցումային պետության առավել քույլ օղակը մարդն է: Նման պետությունում մարդու իրավունքների պաշտպանության ռեալ մեխանիզմները չկան: Որոշ պետական պաշտոնյաների կողմից այս երևույթը բացատրվում է նրանով, որ առանց այն ել քույլ պետությունը պարտավոր է առաջին հերթին պաշտպանել իր շահերը, հետո միայն մտածել անձի իրավունքների և օրինական շահերի մասին:

Մարդու իրավունքների պաշտպանության բոլորացման հետ անմիջականորեն կապված է պետական ապարատում և, ինչու չէ, նաև ամբողջ հասարակությունում կոռուպցիայի աճը: Ցավոք, այսօր այս «սոցիալական հիվանդությանը» հիվանդ է մեր ամբողջ հասարակությունը:

Այս արտավոր երևույթի դեմ պայքարի հիմնական կողմնորոշչիները սահմանված են Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին Եվրոպական կոնվենցիայում: ՀՀ քրեական օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում կաշառք տալու և վերցնելու համար, նաև մշակվել է հակակոռուպցիոն ծրագիր, սակայն խոսել դրա «արդյունավետության» մասին, կարծում եմ, սույն աշխատության շրջանակներում աննպատակահարմար է: Մեր խնդիրն այս հարցի լուծման գործընթացում փաստաբանի դերի պարզումն է:

Այս կամ այն դժվար կենսական իրավիճակում կողմնորոշվելը, օրենքի և արդարության տեսակետից առավել ռացիոնալ և ճիշտ դիրքորոշման մշակումը, ինչպես նաև չարաշահումներից, անօրինականություններից պաշտպանվելուն ուղղված փաստաբանի գործողությունները ոչ միայն վերջինիս պայմանագրային պարտավորություններն են, այլև իրենցից մեծ հասարակական կարևորություն ունեցող խնդիրներ են ներկայացնում:

Նման խնդիր լուծել կարող է միայն այն փաստաբանը, որը լրիվ անկախ է և տեղական ինքնականավարման մարմիններից, և պետական ապարատից, և իրավապահ ու դատական համակարգից: Բայց այս անկախությունը չպետք է հասկանալ որպես փաստաբանների կորպորատիվ «անսպարծության» հետևանք, իշխելու, ընդհանրապես ոչ մեկն ու ոչնչին չենթարկվելու ձգուում: Ամենին, սա պետք է ընկալել որպես օբյեկտիվ անհրաժեշտություն, որը սկզբ է առնում հումանիզմի, դեմոկրատիայի, մարդու իրավունքների եռությունից:

Անցումային պետության առջև ծառացող թերևս ամենաբարդ խնդիրներից է հանցավորության աճը: Սա այսպահանակիրում է մեծ թվով քրեական գործերի հարուցումը: Դատարաններն ուղղակի հեղեղվոս են դրանցով: Եթե այս ամենին ավելացնենք իրավապահ մարմինների որոշ աշխատակիցների ցածր մասնագիտական մակարդակը, անպատճախանատվությունը, կոռուպցիաները, ասլս միայն անկախ փաստաբանի մասնակցությունը կարող է գոնե ինչ-որ չափով մեղմել կասկածյալի կամ մեղադրյալի հանդեպ բացասական վերաբերմունքը, կանչել վերջինիս նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության միջոցների կիրառումը:

## Ով պետք է «Ելդորադոն» իրականություն դարձնի

Թող տպավորություն չատեղծվի, թե ես ցանկանում եմ ֆետիշացնել փաստաբանության դերն ու նշանակությունը հասարակության կյանքում, կամ իրավակիրառ պրակտիկան գուտ տեսական ընդհանրացումներով ուսումնասիրած լինելով, անիմն քննադատել ՀՀ իրավապահ համակարգը, մեղադրել վերջինիս «մարդկության բոլոր մեղքերում», բնավ: Բայց մենք բոլոր ել տեսնում ենք, թե ինչ է կատարվում մեր հանրապետությունում այսօր: Եվ կարծում եմ ոչ մեկիս ել դուր չի գալիս նման իրավիճակը: Իսկ փաստաբաններն առաջին հերթին պետք է շահագրգության դրա հաղթահարման գործում: Ինչու, որպիշետև բոլոր ժամանակներում ել փաստաբանությունը դասվել է քաղաքացիական հասարակության կառույցների թվին (իհման դա ուղղակիորեն ամրագրված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում): Մրա տակ նկատի է ունեցվում այն, որ իրավունքին և քաղաքացիական հասարակությանը ծառայելը, պատկերավոր ասած, փաստաբանության ռազմավարական խնդիրներն են:

Ուստի նրանք պետք է անեն հնարավոր ամեն ինչ, որպեսզի փաստաբանության ինստիտուտը դադարի հասարակության կողմից ընկալվել որպես «հարուստ մարդկանց գործերով գրադիվոր», «անեկալ թիզնեսն ու հանցավոր կառույցները սպասարկող» համակարգ, որը «պաշտպանում է վերջիններիս արդարացի պատժից»՝ դրանով իսկ խոշընդուտելով արդարության հաստատմանը:

Փաստաբանությունը կոչված է պաշտպանել հասարակության բոլոր անդամների իրավունքները, և սա պետք է գիտակցի յուրաքանչյուր ոք: Ինչպես արդարացիորեն նշում է Ս. Ս. Ալեքսեևը, «...իրավունքի հասկացության նոր մեկնաբանությունը էապես տարրերվում է «իշխանամետ» իրավունքի, օրենքի, օրինականության մասին մեր ունեցած պատկերացումներից: Ահա այդ պատճառով բավական դժվար է իրավունքի՝ որպես ամրողացվելու «ուժային» ինստիտուտը ընկալումից անցում կատարել իրավունքի՝ որպես «մարդասեր» երևոյթի, ազատության ֆենոմենի ընկալմանը:

Սակայն եթե անցումը կատարվի, ապա ավելի շատ «Ժողովրդամետ», քան «իշխանամետ» իրավունքը նոր որակ ձեռք կրերի, իսկ վերջինս էլ հնարավորություն կտա նրան վեր կանգնել իշխանությունից՝ դրանով իսկ լուծելով իշխանության «սանձահարման» պրոբլեմը:

Սիայն այս պարագայում հնարավոր կլինի ստեղծել գործուն մեխանիզմներ պետական ապարատի չարաշահումները վերացնելու համար: Եվ միայն այս պարագայում հնարավոր կլինի պաշտպանված քաղաքացիական հասարակության սաղմնավորումը:

Փաստաբանի գործունեությունը պետք է ուղղված լինի իրավաբանական օգնության կարիք ունեցող անձանց և կազմակերպություններին որպես օգնություն ցույց տալուն, ինչպես նաև արդարադատության հասնելու յուրաքանչյուրի հնարավորությունը ապահովելուն: Իրավաբանական օգնություն ստանալու պահանջ առաջանում է ամենուր և անընդհատ: Պրակտիկորեն

չկա մարդկային գործունեության այնպիսի բնագավառ, որում անհրաժեշտ չիներ իմանալ կամ կիրառել այս կամ այն իրավական նորմը: ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում աճրագրված մարդու իհմնական իրավունքներն ու ազատությունների իրականացումն անհնար է առանց համապատասխան իրավական մեխանիզմների կիրառման: Մարդու իրավունքների և ազատությունների պետական պաշտպանության երաշխիքներն են, իրենց հերթին, պահանջում են հենց որակյալ իրավաբանական օգնություն ստանալու երաշխիքներ: Յուրաքանչյուրի կողմից իր իրավունքների և ազատությունների՝ օրենքով շարգելված բոլոր միջոցներով իրականացումը պահանջում է որոշակի գիտելիքների առկայություն: Փաստաբանն էլ այն անձն է, ով ունի այդ գիտելիքները, և նրա վրա է դրված հասարակության յուրաքանչյուր անդամի իրավաբանական օգնություն ցույց տալու պարտականությունը:

Փաստաբանը կոչված է պաշտպանել կամայականություններից, ահա այդ պատճառով կոնկրետ անձի, կազմակերպության իրավունքների, շահերի օրինական ճանապարհով պաշտպանություննը միաժամանակ համապատասխանում է ամբողջ հասարակության հանրային-իրավական շահերի պաշտպանությանը: Պատահական չէ, որ անընդհատ կրկնում եմ պաշտպանության օրինական լինելու մասին: Փաստաբանական գործունեության մեջ «նպատակն արդարացնում է միջոցները» գաղափարախոսությունն անընդունելի է: Ավելին, սա կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Այս պահանջի մեջ է կայանում փաստաբանական գործունեության բարդությունը: Եվ սրանից են բխում փաստաբանի անձնական և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող բավական բարձր պահանջները: Բավական է հիշել Ռ. Հարդիսի խոսքերը. «...կարելի է ասել, որ փաստաբանին շրջապատող բոլոր դժվարությունները հաղթահարենիս զավակածությունն նրա լավագույն ուղեկիցը կլինի, իսկ առողջ դատողությունը՝ վստահելի ղեկավարը»: Հիրավի, փաստաբանը պետք է ունենա առողջ դատողություն: Սա փաստաբանի այն բացառիկ ու, թերևս, միակ հատկանիշն է, առանց որի մնացած բոլոր հատկանիշների գոյությունն անիմաստ է:

Առողջ դատողությունը հատկապես կարևորվում է, քանի որ փաստաբանը պետք է կարողանա նախ հասկանալ վեճի առարկան, տեսնել իրական նպատակներն ու դրանց հասնելու օրինական ճանապարհները, բացի այդ նա պետք է կարողանա գրագետ ձևով տանել դատավարությունը: Բացի դատողությունից փաստաբանի համար ոչ պակաս կարևոր է տեսական գիտելիքների առկայությունը: Փաստաբանը պետք է կատարյալ տիրապետի օրենսդրությանը, տեսնի և ընկալի դրա նրբությունները: Փաստաբանը պետք է բավական հեռատեսություն ունենա, որպեսզի հասկանա այդ պահին հակառակ կողմի հնչեցրած հարցի եռթյունն ու ենթատեքստը և այն, թե ինչ հետևանք կարող է ունենալ այդ հարցը դատավարության հետագա ընթացքի վրա: Սա արդեն խոսում է փաստաբանի ճկունության մասին: Ի վերջո չպետք է մոռանալ, որ փաստաբանին ամբիոն է տրամադրվում ոչ միայն իր հոեստորական հմտությունները ցուցադրելու համար, այլ ճիշտ երկխոսություն տանելու, դիմացինի ասածն ընկալելու, նրա մտքի ընթացքը հասկանալու համար: Չնայած իրավաբանական գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվում, որ հոեստորական արվեստին տիրապետելը փաստաբանի կարևորագույն հատկանիշներից է, սակայն ես գտնում եմ, որ սա չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Հոեստորն, ըստ Էության, մենախոս է, իսկ փաստաբանի առջև ճիշտ երկխոսություն տանելու և հաղթող դրւու գալու խնդիր է դրված:

Բացի վերոնշյալ հիմնական հատկություններից փաստաբանը պետք է ունենա մի շարք այլ հատկանիշներ, որոնք կօգնեն նրան իր գործունեությունն իրականացնելիս: Խոսքը մասնագիտապես փաստաբանի ընդհանուր զարգացվածության մասին է: Գերման դե Բերսը, հենվելով սեփական փորձի վրա ասում էր. «Փաստաբանը պետք է պատկերացում ունենա ամեն ինչի մասին»:

Փաստաբանի մասնագիտության մասին խոսելիս Ա. Ֆ. Կոնին նշում էր, որ փաստաբանի համար ընդհանուր զարգացվածության բարձր մակարդակը, վարքագծի բարձր կուլտուրան մասնագիտական հմտությունների ձեռքբերման նախադրյալ են հանդիսանում:

Խոսելով ընդհանուր և մասնագիտական կուլտուրայի մասին՝ չպետք է մոռանալ, որ փաստաբանի վստահելի ու անսխալ գործունեությունն կախված է նրա բարոյական կուլտուրայից: Վերջինս արտահայտվում է հիմնականում փաստաբանի մասնագիտական էթիկայի կանոնների պահպանման մեջ:

Առաջին հայացքից բոլոր այս պահանջները կարող են չափից դրւու խիստ բվալ, բայց չպետք է մոռանալ, որ փաստաբանության ինստիտուտի կայացմանն ուղղված բոլոր ջանքերն իգուր կլինեն, եթե փաստաբանը, չունենալով զավակածություն, սկզբունքայնություն, օրինապա-

հուրյուն, դրանցից զուրկ լինելու մեջ մեղադրի դատավորին, դատախազին, քննիչին, կամ պետական մարմնի այլ աշխատակցին:

Նախքան հետագա ասելիքս շարադրելը՝ կցանկանայի պարզաբանել, թե ինչու եմ սույն դատողությունները շարադրելիս հիշատակել առասպելական էլդրուադոն: Կարդալով որոշ տեսարանների աշխատությունները՝ նրանց բոլորի մոտ էլ ես նկատեցի մի տարօրինակ, ինչ-որ տեղ նոյնիկ կասկածելի օրինաշափություն՝ նրանք խոսում են փաստաբանության մասին՝ հղում անելով զարգացած, քաղաքակիրք պետություններում գործող «փղեալական» մի ինստիտուտին: Կարծում եմ, կիամաձայնվեր ինձ հետ, որ սա, մեղմ ասած, չափազանցություն է: Եթե պատկերավոր ձևով ընդհանրացնենք նրանց (հատկապես ոռու իրավաբանների) մոտեցումները, ապա կստացվի, որ նրանք բոլորն էլ պնդում են, թե «այս իդեալական համակարգը կա, գործում է, բայց ոչ այստեղ, այլ ինչ-որ մի այլ տեղ: Օրինակ՝ անզրուամերիկյան համակարգի երկրներում»: Նոյն էլդրուադոն է՝ տեղ, որը կա, բայց ոչ այստեղ: Նրանք իմնավորում են իրենց փաստաբանները՝ հենվելով այն մոտեցման վրա, որ մեր հասարակությունում փաստաբանության «երերուն» դիրքը կապված է նրա հետ, որ վերջինս գտնվում է իրավական կյանքի պերիֆերիայում: Մեր ազգի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մենք արդարադատության իրականացումն ապահովող մարմինների «ցանկը» սահմանափակում ենք դատարանով, դատախազությամբ, ոստիկանությամբ: Փաստաբանության դերը բարդ պետական և ոչ պետական իմնախախնդիրներ լուծելիս թերագնահատվում է՝ ընկալվելով որպես ոչ բավականաշափ լուրջ ինստիտուտ նման հարցերի լուծման գործում ներդրում ունենալու համար: Նրանք նշում են, որ փաստաբանության հեղինակությունը և նրա գործումներության արդյունավետությունն անմիջականորեն կապված են հասարակության մեջ անձի դիրքով, ժողովրդավարության և օրինականության ֆունդամենտալ սկզբունքների նկատմամբ հասարակության վերաբերմունքով:

Ես նման մոտեցման հետ համաձայն չեմ: Նախ, փաստաբանության ինստիտուտը բավական բարդ համակարգ է, անհնար է, որ որևէ պետությունում այն կատարելապես կայացած լինի: Ուղղակի անհնար է, որ նոյն ԱՍՆ-ում փաստաբանության գործունեությունն ուղղակի չքախվի որոշակի գծվարությունների, լինի այնքան անթերի, որքան նկարագրված է այդ աշխատություններում: Մեր տեսաբանների այս պնդումներում ես այլ ենթատեքստ եմ տեսնում՝ փախուստ ցանկացած պատախանատվությունից կամ պարտականությունից: Հեշտ է ամեն ինչի համար բացատրություն գտնել, մեղադրել այլ համակարգերին անկատարության մեջ, որի հետևանքով երկրում օրինականությունը ճգնաժամ է ապրում: Եկեք հարցին մոտենանք այլ տեսանկյունից. Նոյն ԱՍՆ-ն կայացման բարդ ուղի է անցել: Ժողովրդավարական ու իրավական պետությունը նրան որևէ մեկի կրողից չի նվիրաբերվել: Նման պետություն կառուցվել է նրա բոլոր, այդ թվում, փաստաբանության ակտիվ գործումնեությամբ ու ջանքերով:

Ես գտնում եմ, որ անհմաստ է սպասել, թե առանց գործնական քայլեր ձեռնարկելու այս ինստիտուտը կլայան: Առավել ևս, որ «Փաստաբանության մասին» 2004թ. ՀՀ օրենքը իրավական իմքեր է ստեղծել փաստաբանների համար ազատորեն գործելու և մեր երկրում փաստաբանության ինստիտուտի կայացման անոր իմքեր դնելու համար:

Աշխատանքին եզրափակիչ մասում կցանկանայի խոսել փաստաբանության արդյունավետ գործումնեության և երկրի տնտեսական վիճակի միջև առկա կապի մասին:

Այսօր ամբողջ աշխարհում կա մոտ չորս միլիոն փաստաբան, որոնցից 850000-ը ԱՍՆ-ում, 450000-ը Եվրոպիության երկրներում, 400000-ը Հնդկաստանում, 300000-ը Բրազիլիայում, 1500000-ը մնացած երկրներում: Ինչպես տեսնում ենք, փաստաբանների մեծ մասն աշխատում է ԱՍՆ-ում: Առաջին հայացքից պարզ է, թե ինչո՞ւ է դա պայմանավորված. ԱՍՆ-ն տնտեսապես զարգացած պետություն է, այնտեղ կա փաստաբանի ծառայությունների մեծ պահանջարկ: Բայց այս դատողությունն այնքան էլ ճշշտ չէ, որովհետև խախտված է պատճառահետևանքային կապը: Այժմ առաջարկում եմ ուսումնասիրել հարցն ավելի խորությամբ:

Պարզից էլ պարզ է, որ պետության տնտեսական զարգացումն առաջնային է քաղաքական, սոցիալական և այլնի նկատմամբ: Գործելով հանուն իր շահի՝ ձեռնարկատիրությունն ահուելի օգուտ է բերում պետությանը: Դա կլինի հարկերի, նոր աշխատատեղերի ստեղծման, նոր ինֆրաստրուկտուրաների ստեղծման, արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միջոցով: Տեսականորեն շուկայական տնտեսությունը, մասնավոր սեփականությունը և սոցիալական ուղղվածությունը ունեցող տնտեսությունը մարդու բարեկեցության հիմքն են:

Համապատասխանաբար բիզնեսի և մասնավոր սեփականության պաշտպանությունը փաստաբանի գործումնեության իմնախական և գլխավոր ուղղություններն են՝ որպես քաղաքա-

ցիական հասարակության առաջնային ինստիտուտի: Եվ բացի այդ, քաղաքացիական հասարակության ձևավորման պայմաններից է ժողովրդի կենսամակարդակը: Ահա այդ պատճառով շուկայական տնտեսության ձևավորման ճանապարհին կանգնած պետության մեջ բիզնեսի պաշտպանությունն իրենից ներկայացնում է առաջատար գործունեություն, որը կարևոր է ոչ թե միայն կրթության անձի, այլ ամբողջ հասարակության համար:

Այստեղից որպես եզրակացություն կարելի է հանգել նրան, որ փաստաբանը, բացի սույն աշխատությունում նշված գործունեության ուղղությունների, պետք է ձգտի իր արժանի տեղը զբաղեցնել հետևյալ բնագավառներում՝ գործարարության (բիզնեսի) սպասարկում, առևտրային կառույցների միջև ծագող վեճերի բանակցային ճանապարհով լուծում:

Բայց պարզ է, որ սա ապագայի խնդիր է: Սա պետք է հանդիսանա փաստաբանության առաջնային խնդիրների լուծման տրամադրանական շարունակություն:

Փաստաբանության՝ որպես լիարժեք ինստիտուտի կայացումը մեզ ավելի կմոտեցնի իրավական պետությանն, իսկ վերջինիս հետևանքն էլ կլինի քաղաքացիական հասարակության ձևավորումը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. «Փաստաբանական գործունեության մասին» 1998թ. ՀՀ օրենքը
2. «Փաստաբանության մասին» 2004թ. ՀՀ օրենքը
3. Է. Ն. Յօջանն «Աճան էածոծա է աճան էածոծա», Լ Ի Ռեալ, 2003թ.
4. Ա. Է. Նազարյան «Աճան էած է Աճան էածոծա», Լ Ի Ռեալ, 2003թ.
5. Լ Ի Ռ Ժան էած ա «Աճան էածոծա է աճան էածոծա Ի Ռ է», Լ Ի Ռեալ, 2003թ.
6. Լ Ի Ռ Ժան էած ա «Աճան էածոծա է Բ Ի Ռ է», Լ Ի Ռեալ, 2004թ.

## ԼԻԼԻԹ ՔԱՍՏԱՑԱՆ

### Ներածություն

Ցանկացած ժողովրդապավարական հասարակությունում փաստաբանները կոչված են կարևոր դեր խաղալ արդարադատության իրականացման, վեճերի կանխարգելման և լուծման, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում: «ՀՀ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» հոդված 2.1 – ի համաձայն՝ փաստաբանն աջակցում է հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերն ամրապնդելու ուղղությամբ: Յուրաքանչյուր փաստաբան իր գործունեությունն իրականացնելիս պետք է հիշի, որ իր վարքագծի հիման վրա պատկերացում է կազմվում օրինականության, արդարադատության և ողջ փաստաբանության վերաբերյալ: Պատշաճ մակարդակ ապահովելու համար փաստաբանը պետք է գործի ճկուն և իրավիճակին խիստ համապատասխան: Նրա գործունեությանը ներկայացվող պահանջներից են ինչպես օրինականությունը, այնպես էլ բարոյականությունը: Փաստաբանական վարքագիծը ոչ միայն պետք է բխի օրենսդրական դրույթներից և համապատասխանի դրանց, այլև բարոյապես անթերի լինի:

Վերջին տարիներին փաստաբանների գործունեությունը ավելի շատ տնտեսական բնույթ է ստացել, այսինքն՝ շահույթ ստանալու միտում ծեռք բերել: Բայց, իմ կարծիքով, դա չպետք է խանգարի, որպեսի փաստաբանները մնան ազատ և անկախ մասնագիտության ներկայացուցիչներ՝ պահպանելով գործունեության հիմքում գտնվող սկզբունքները: Չարմանալի չէ, որ բարոյականությունը փաստաբանական գործունեությանը ներկայացվող կարևորագույն պահանջներից է: Չէ՞ որ «փաստաբան» ամերով՝ հասկանում ենք նրան, ով կոչված է իրավաբանական օգնություն ցույց տալ մարդ արարածին: Լատիներեն advocatus և advocare բառերը բարգմանաբար նշանակում են՝ կանչել օգնության: Բացի այդ, փաստաբանը գործ ունի այն-

պիսի արժեքների հետ, ինչպիսիք են նարդու իրավունքներն ու ազատությունները, կյանքը, ճակատագիրը:

Իրենց հերթին, բարոյականության հիմնական պահանջները, որոնք ներկայացվում են փաստաբանական գործունեությանը, միավորվում են մեկ անվան ներքո, որը կոչվում է փաստաբանական էթիկա:

Ի՞նչ է փաստաբանական էթիկան: Որո՞նք են դրա բաղկացուցիչ մասերը: Ի՞նչ կարևոր սկզբունքներ է այն ներառում: Ի՞նչ տարբերություն կա ՀՀ-ում ձևավորված փաստաբանական էթիկայի և արտասահմանյան մոդելի միջև:

Սույն աշխատությունում ես կփորձեմ պատասխանել այս և մի շարք այլ հարցերի և տալ դրանց գնահատականը:

## Փաստաբանական էթիկայի ընդհանուր բնութագիրը, կազմավորումը և կառուցվածքը

Փաստաբանական հեղինակությունը և նրա նկատմամբ վստահությունը պահպանելու համար փաստաբանների միջև, նրանց և վստահողմների, նրանց և այլոց միջև առաջացող հարաբերությունները կարգավորելու և փաստաբանական գործունեության կայունությունն ապահովելու համար է, որ ստեղծվել է փաստաբանական էթիկան: Պատմականորեն ապացուցված է, որ փաստաբանությունը, որը չի ընդունում էթիկական սկզբունքները և չի գործում դրանց համապատասխան, չի կարող արժանանալ հասարակության վստահությանը: Փաստաբանական էթիկան չունի պատրաստի դեղատոններ յուրաքանչյուր հարաբերություն կարգավորելու համար, սակայն իր սկզբունքների միջոցով կոչված է կանոնակարգելու այն համաստու հարաբերությունները, որոնց կարգավորումը չի իրականացվում իրավանորմերի միջոցով: Կարճ ասած՝ այն իրականացնում է փաստաբանի վարքագիծի բարոյական կողմի կարգավորումը:

**Կազմավորումը:** «Էթիկա» բառը առաջացել է հունարեն *ethos* բառից, որը թարգմանաբար նշանակում է սովորույթ, և ունի բարոյական բնույթ: Առաջին անգամ սույն հասկացությունը կիրառվել է Արիստոտելի կողմից: Վերջինս նշում էր, որ էթիկան կանոնների ամրողություն է, որը սահմանում է, թե ինչպիսին պիտի լինի մեր վարքագիծը և իրենից ներկայացնում է դրան ուղղված բարոյական պահանջների ամրողություն:

Էթիկան գոյություն ունի իրավունքի կողքին և նրա հետ միասին հանդես է գալիս որպես սոցիալական կարգավորիչ: Այն ծագում է տարերայնորեն, մեծամասամբ՝ մարդկանց գիտակցությունում: Դրա ապահովման ներքին երաշխիքը մարդու համոզվածությունն է, խիդեր, խկ արտարինը՝ հասարակական կարծիքը: Այն կարգավորում է իրականացնում՝ ազբելով անհատի գիտակցության վրա: Եթե էթիկան բարոյական պահանջների ամրողություն է, որն ուղղված է մարդու վարքագիծն, ապա փաստաբանական էթիկայի դրույնները կարգավորում են փաստաբանական վարքագիծը: Ընդ որում, փաստաբանը պետք է դրանցով դեկավարվի ոչ միայն իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, այլև առօրյա կյանքում: Վերը շարադրվածից կարող է նույնականացնել առաջանալ, որ փաստաբանն ներկայացվող պահանջները չափազանց խիստ են, սակայն պետք է նաև հաշվի առնել նրա ունեցած կարևոր դերը, գործունեության ոլորտը և պատասխանատվության աստիճանը:

Փաստաբանական գործունեության էթիկական հիմքը կանխորշվում է նրա բարոյական գիտակցությամբ, հայացքներով, բարեխսդիմ և անբարեխսդիմ, պատշաճի և անպատշաճի վերաբերյալ պատկերացուներով: Ընդհանուր առմամբ, փաստաբանական էթիկան դրսևով է որպես ճշճարտության զգացում, ազմվության և բարոյական պատասխանատվության գիտակցում: Հաճախ այն համեմատվում է բժշկական էթիկայի հետ: Երկուսին ել առաջարդվում են համանման պահանջներ, երկու դեպքում ել գործ ունենք մարդու կյանքի հետ, և երկուսն ել համարվում են ընդհանուր էթիկայի բաղկացուցիչ տարատեսակները:

**Կառուցվածքը:** Ինչպես իրավաբանի մասնագիտական էթիկան, այնպես ել փաստաբանական էթիկան ունի երեք բաղադրատարեր:

1. կարգավորման առարկա,
2. նորմատիվային բաղադրատարը,
3. փաստաբանի էթիկական գիտակցություն:

Կարգավորման առարկան այն հարաբերություններն են, որոնց մասնակցում է փաստաբանը և որոնցում պետք է դրսևոր կայնական պահանջների այնպիսի վարքագիծ, որը բխում է բարոյականության պա-

հանջներից և կարգավորված չլինելով իրավանորմերով՝ մասնավորեցվում է բարոյաէթիկական դրույթներում: Բարոյաէթիկական դրույթները, իրենց հերթին, հանդես են գալիս որպես նորմատիվային բաղադրատարք և արտացոլվում են հիմնարար-ելակետային դրույթներում՝ սկզբունքներում: Ինչ վերաբերում է փաստաբանի էթիկական գիտակցությանը, ապա այն դրսորվում է հայացքների, արժեքների, գաղափարների տեսքով, որոնք ձևավորվում են յուրաքանչյուր փաստաբանի մոտ՝ բարոյահոգեբանական ազդեցության հետևանքով: Կարգավորման առարկան իր հերթին բաժանվում է մի շարք ոլորտների, որոնցից յուրաքանչյուրը ներառում է հետևյալ բնույթի հարաբերությունները.

- հարաբերություններ, որոնք առաջանում են իրավաբանական մասնագիտական ընկերության և պետության ու հասարակության միջև,
  - փաստաբանի և նրա մասնագիտական գործունեության ոլորտում հայտնված կոնկրետ անձի միջև,
  - հարաբերություններ տարբեր կորպորացիաների փաստաբանների միջև:
- Այլ կերպ ասած, կարգավորման առարկան ներառում է հետևյալ շարք հարաբերությունները.
- փաստաբան - փաստաբան,
  - փաստաբան - վստահորդ,
  - փաստաբան - հակադիր շահերով վստահորդներ,
  - փաստաբան - ԶԼՄ,
  - փաստաբան - դատարան:

## Փաստաբանական էթիկայի հիմնական սկզբունքները և դրանց կիրառման գործնական հիմնախնդիրները

Անկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով՝ փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագրով» որպես փաստաբանական գործունեության սկզբունքներ ուղղակիորեն նախատեսված են միայն անկախության և գաղտնիության սկզբունքները: Կանոնագիրը պարունակում է նաև մի շարք դրույթներ, որոնց բովանդակության հիման վրա կարելի է առանձնացնել.

- փոխադարձ վստահության,
- փոխադարձ հարգանքի և հանդուժողականության,
- շահերի բախման դեպքում փաստաբանական ծառայության մատուցման անթույլատրելիության,
- կոմպետենտության (ձեռնիասության),
- բարեխնդության,
- ազնիվության սկզբունքները:

Սակայն դրանք կանոնագրում արտացոլված են թերի, մակերեսորեն և տեղ են գտնել ոչ թե որպես սկզբունքներ, այլ որպես կանոնագրքի զուտ բաղկացուցիչ դրույթներ: Ինչ-որ չափով դեռևս հասկանալի է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը մանրամասնորեն չի ներկայացնում էթիկական սկզբունքները, բայց, ինչ վերաբերում է կանոնագրքին, այստեղ արդեն զարմանքի տեղիք է տալիս այն հանգամանքը, որ ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագիրը», որում ներկայացվում են փաստաբանական գործունեությունը բարոյապես կանոնակարգող դրույթները, իրականում այդ նույն դրույթները ընդգրկում է ոչ ամբողջությամբ և բացթողումներով, իսկ որոշները ընդհանրապես չի ներառում: Չէ՞ որ հենց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի համաձայն՝ ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագիրը» սահմանում է փաստաբանի վարքագծի կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները: Ստացվում է, որ կանոնագրքի անվանումը և բովանդակությունը իրար այնքան էլ չեն համապատասխանում:

Որպեսզի ստեղծված իրավիճակն ավելի պատկերավոր լինի, ես կփորձեմ պարզաբանել և վերլուծել վերոնշյալ սկզբունքները և համեմատել դրանք Ռուսաստանի և Եվրոպիության փաս-

տարանների վարքագծի կանոնագրքերի, ինչպես նաև «Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էթիկայի տիպային կանոնների» հետ:

Եվ այսպիս, առաջին սկզբունքը, որը նախատեսված է և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, և ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագրքով», անկախության սկզբունքն է: Կանոնագիրը հետևյալ կերպ է պարզաբանում սույն սկզբունքի հությունը.

- փաստաբանն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին<sup>1</sup>,
- փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին հաճախատախսիան կատարված գործողությունների, բարեխիղճ կատարված պարտականությունների և իր հայտնած կարծիքի ու դիրքորոշման համար,
- փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո<sup>2</sup>: Այս դրույթն անկախության սկզբունքի երաշխիք է հանդիսանում: Այդպիսի երաշխիքներից մեկն էլ նախատեսված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների կողմից ճնշման, միջամտության կամ որևէ ազդեցության գործադրումը փաստաբանական գոծունեության նկատմամբ: Անկախության սկզբունքը ոչ միայն ճշանակում է կախված չինել վերոնշյալ մարմիններից և անձանցից (այդ թվում՝ վստահորդից), այլ ընդհանրապես բացառում է թե նյութական, թե բարոյական բնույթի որևէ կախվածություն:

Բացի այդ, կանոնագրքում կա մի բացրողում: Անկախության սկզբունքի համաձայն՝ փաստաբանը չի կարող մշտապես կամ ժամանակավորապես նստավայր ընտրել և գործել դատարաններին, դատախազությանը, գործադիր կամ տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող շենքերում կամ տարածքում, դրանց հարակից շենքերում և տարածքում. այս դրույթը ևս անկախության երաշխիքներից մեկն է:

Ելնելով վերոնշյալից՝ ես առաջարկում եմ համախմբել տվյալ սկզբունքի երաշխիքները կանոնագրի առանձին հոդվածում:

Օրենքով նախատեսված է նաև ինքնակառավարման սկզբունքը, որը սերտ կապի մեջ է մտնում անկախության սկզբունքի հետ: Այն հանգեցնում է փաստաբանության գործունեության հետ առնչվող իիմնահարցերի լուծմանը պալատի ներսում, փաստաբանական ներկազմակերպական խնդիրներին որևէ միջամտության անքույլատրելիությունը: Բացի այդ, փաստաբանությունը չի կարող ընդգրկվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում. այն ինըն իրեն կառավարող մարմին է:

Փաստաբանների իրավահավասարության սկզբունքը նշանակում է, որ բոլոր փաստաբանները ունեն նույն կարգավիճակը և իրավունքների ու պարտականությունների նույն շրջանակը: Իսկ փաստաբանի կարգավիճակ կարող է ծուռը բերել այն անձը, ով օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում:

Օրինապահության սկզբունքը փաստաբանի ենթարկվելն է օրենքին: Այլ կերպ ասած, դա փաստաբանական գործունեության համապատասխանությունն է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին, ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագրքին» և Փաստաբանական պալատի կանոնադրությանը: Նեկավարվելով Եվրոպիության փաստաբանների վարքագծի կանոնագրքի դրույթներով՝ փաստաբանը պարտավոր է ոչ միայն պահպանել ներպետական վարքագծի կանոնները, այլև գործել անդամ-պետությունների կանոնագրքերին հանդապատասխան: Իմ կարծիքով, փաստաբանը ընդհանրապես պետք է հարգի յուրաքանչյուր պետության կանոնագրքի պահանջները, իսկ դրանց միջև եղած հակասություններն արդեն պետք է կար-

<sup>1</sup> Սույն դրույթը ավելի հաջող և տրամաբանական ձևակերպում է ստացել «Փաստաբանության մասին» օրենքում, ըստ որի՝ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, դեկապարվում է միայն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, ԴՀ «Փաստաբանի վարքագծի կանոնագրով» և Փաստաբանական պալատի կանոնադրությամբ:

<sup>2</sup> Վերջին դրույթը պետք է որ, ըստ տրամաբանության, ձևակերպվեր առանձին՝ որպես փաստաբանի իրավական պաշտպանությանը վերաբերող դրույթ:

գավորվեն միջպետական, ինչպես նաև տարբեր փաստաբանական միությունների միջև կնք-ված համաձայնագրերով:

ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագրքում», թեև, առանձին տողով տեղ չի գտել փոխադարձ վստահության սկզբունքը, սակայն ինչ-որ չափով արտացոլում է գտել դրա դրույթ-ներում: Սկզբունքի համաձայն՝ վստահորդը պետք է վստահություն ունենա փաստաբանի նկատմամբ: Վստահություն սովորաբար վայելում է ավելի մեծ փորձ ունեցող, համակրելի պահվածքով և վարքագծով, ինչպես նաև համակրելի արտաքին ունեցող փաստաբանը: Վստահությունը կարևոր է համաշխատ կամ խոր պահանջման դեպքում, որպեսզի վստահորդը փաստաբանին ներկայացնի այնպիսի տեղեկություններ, որոնք, ըստ էության, փաստաբանական գաղտնիք են համարվում: Վստահություն կարող է ներշնչել այն փաստաբանը, որը բարեխնդորեն հետևում է կանոնագրի պահանջներին, պատշաճ ձևով իրականացնում իր պարտականությունների կատարումը: Հարկ է նշել, որ վստահորդի վստահությունը ձեռք բերելու համար փաստաբանն իրավունք չունի երաշխիքներ կամ խոստումներ տալ գործի ելքի մասին, առավել ևս՝ վկայակոչելով իր մասնագիտական հմտությունները կամ հարաբերություններն իրավապահ մարմինների հետ: Փոխադարձ վստահություն ասելով՝ մենք նկատի ունենք նաև, որ փաստաբանը պետք է վստահի իր վստահորդին: Օրինակ՝ փաստաբանը պետք է համոզված լինի, որ նրան ներկայացված ինֆորմացիան ճշմարիտ և լրիվ է տրամադրված: Քննարկենք մի դեպք: Փաստաբանի մոտ գալիս է հաճախորդ և տեղեկացնում, որ իրեն մեղադրում են սպանության կատարման մեջ: Տրամադրելով հանցագործության վերաբերյալ տեղեկություններ՝ նա նշում է, որ բացարձակագետ անմեղ է: Ընթացրում նա բարցմում է ինֆորմացիայի որոշակի մասը, մյուս մասը ներկայացնում արագակագույն տեսքով: Ինչպես՞ս պետք է վարչի փաստաբանը՝ հասկանալով, որ տեղի է ունեցել խարեւություն: Հեղինակների մի մասը գտնում է որ տվյալ դեպքում վստահության մասին այլև խոր լինել չի կարող<sup>3</sup>:

Հարց է առաջանում, արդյոք փաստաբանը ընդհանրապես պետք է վստահի հաճախորդին, թե ոչ, և եթե այս, ապա որ պահից: Եթե փաստաբանը ի սկզբանն չվստահի հաճախորդին, նա կրուսերի կանխակալ վերաբերմունք, որն անթույլատրելի է: Էթիկան փաստաբանից պահանջում է վստահություն ցուցաբերել իր հաճախորդների նկատմամբ, բայց և չի արգելում զգոն լինել, որպեսզի կանխարգելվի մոլորության և խարեւության իրավիճակը:

Փաստաբանների վարքագծի կանոնագիրը նաև ինչ-որ չափով արտացոլել է փոխադարձ հարգանքի և հանդուժողականության սկզբունքը: Վերջինս դրսեղություն է դատարանի, վստահորդի և այլ փաստաբանների նկատմամբ:

Դատարանի նկատմամբ հարգանքը և հանդուժողականությունը դրսեղություն է նրանում, որ փաստաբանին չի թույլատրվում միջամտել դատավորի գործունեությանը: Նրա կողմից դատավորին սպասնալը, վիրավորանք հասցնելը, նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեղություն, ինչ ձևով էլ դա արտահայտված լինի, առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն և համարվում է սույն սկզբունքի խախտում: ՀՀ «Փաստաբանական վարքագծի կանոնագրություն» նշում է, որ նախազահողի գործողությունների հետ փաստաբանի անհամաձայնությունը պետք է արտահայտվի գործառք, պատշաճ ձևով, օրենքի պահանջներին համապատասխան: Փաստաբանի համար անթույլատրելի է հետևյալ գործողություններից որևէ մեկի կատարումը.

- գործի էական հանգամանքների վերաբերյալ կեղծ հայտարարություններ անելը,
- դատարան ակնհայտ կեղծ ապացույցներ ներկայացնելը,
- իր գործողություններով դատարանին մոլորության մեջ գցելը:

Եթե փաստաբանը համոզված է վկայի ցուցմունքների կեղծության մեջ, ապա նա, անկախ վստահորդի ցանկությունից, պարտավոր է հրաժարվել այդ ցուցմունքներն օգտագործելուց:

Առավել մանրամասնորեն այս դրույթները ներկայացվում են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական երիշայի տիպային կանոններում:

Ըստ էության, փաստաբանի նկատմամբ հարգանք վերաբերմունքը ենթադրում է նաև փաստաբանի կողմից ազնվության դրսեղություն դատարանի նկատմամբ: Քննարկենք մի դեպք:

<sup>3</sup> Տես 1. Աձնաձայնություն, «Աձնաձայնություն և այլ պահանջման մեջ դատարանի գործողությունը կանոնագրությունը», Մ. 2003 թ. մայիս ամսաթիվ 10: Վերջինիս կարծիքով նման դեպքում փաստաբանը իրավունք ունի հրաժարվել վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալուց, քանի որ նրա կողմից խարեւություն դրսեղություն հետևանքով կորցրել է վստահությունը հաճախորդի նկատմամբ:

Փաստաբանը իրականացնում է իր վստահորդի շահերի պաշտպանություն: Գործի քննության ընթացքում մեղադրյալը տախու է կեղծ, իրականությանը չհամապատասխանող ցուցմունքները: Իմանալով այդ մասին՝ ինչպե՞ս պետք է վարդի փաստաբանը, եթե նա գիտի իրականությունը: Եթե փաստաբանը դատարանին հայտի ճշմարտությունը, նա կխախտի փաստաբանական գաղտնիքը: Ի դեպ, նշեմ, որ փաստաբանական գաղտնիքը են համարվում այն տեղեկությունները որոնք վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը ձեռք է բերել ինքնուրույն, իր գործունեության ընթացքում և որոնք հայտնի չեն հանրությանը: Փաստաբանը չի կարող հարցարձնվել որպես վկա այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ: Չատ լավ, որեմն եթե դատարանը չի կարող պահանջել փաստաբանից հայտնել ճշմարտությունը, ապա դա կարող է տեղի ունենալ միայն փաստաբանի նախաձեռնությամբ: Մի կողմից, փաստաբանը չի կարող վստահորդի շահերին հակասող կամ դրանք խախտող որևէ գործողություն կատարել, բայց, միևնույն ժամանակ, նրա պարտականություններից մեկն էլ ազնվության սկզբունքի պահպանությունն է, որը պահանջում է զերծ մնալ խարեւությունից, իրավախախտումներից, անօրինականություններից: Քննարկվող դեպքում, եթե փաստաբանը պահպանի փաստաբանական գաղտնիքը, ապա կխախտի ազնվության սկզբունքը: Բացի այդ, փաստաբանական գաղտնիքի պահպանությունը ունի որոշակի բացառություններ:

- եթե առկա է վստահորդի համաձայնությունը,
- եթե դա անհրաժեշտ է փաստաբանի և վստահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ փաստաբանի պաշտպանության համար,
- եթե առկա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին հաղորդում:

Վերջին դրույթի հետ ես ոչ ամրողջովին եմ համաձայն, քանի այն պարունակում է թերություններ: Վկայակոչելով Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էթիկայի տիպային կանոնները՝ կարող եմ ասել, որ բոլոր դեպքերում, եթե տեղեկություններ չի բացարակելը կարող է հանգեցնել ոչ միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների, այս լորջ իրավախախտումների, խոշոր գույքային վնասի, փաստաբանը կարող է խախտել գաղտնիության սկզբունքը: Մտածունքի տեղիք է տալիս, թե ինչու ներպետական օրենքում խորը է գնում սուս նախապատրաստվող հանցագործությունների մասին: Իսկ եթե մինչ գաղտնիության սկզբունքը խախտելը հանցագործությունը արդեն տեղի է ունենում, և փաստաբանը չի հասցնում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան մարմիններ, այդ դեպքում սույն հարցը հ՞նչ կարգավորում պիտի ստանա:

Վերադառնալով մեր օրինակին նշեմ, որ փաստաբանը կպարտավորվի տեղեկացնել դատարանին մեղադրյալի կեղծ ցուցմունքի մասին: Բացի այդ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էթիկայի տիպային կանոններում նշվում է, որ փաստաբանը կարող է հրաժարվել այնպիսի ծառայությունից, որը նրան մղում է անօրինական գործողությունների: Այն դեպքերում, եթե հրաժարումը հնարավոր չէ, նա պետք է փորձի կանխել, խափանել օրենքով չնախատեսված գործողությունները կամ պետք է տեղեկացնի դրանց մասին դատարանին:

Փաստաբանի կողմից հարգալից վերաբերմունք և հանդուժողականություն պետք է դրսերվի ոչ միայն դատարանի, այլև վստահորդի և այլ փաստաբանների նկատմամբ: Անհարգալից վերաբերմունք է դրսերվում վստահորդի նկատմամբ, եթե փաստաբանն անհիմն խուսափում է դատարան ներկայանալուց, զգձգում է գործը, պատշաճ չի կատարում իր պարտականությունները: Փաստաբանների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դասական օրինակ է, եթե մյուս կողմին տրամադրվող տեղեկատվությունը կեղծ է, աղավաղված, եթե տեղեկություններ և ապացույցներ ձեռք բերելիս հակառակ կողմից համար խոշնդոտներ են ստեղծվում: Փաստաբանների միջև հարգալից վերաբերմունքին է վերաբերում հետևյալ օրինակը: Վստահորդը ունեցել է սկզբում մի փաստաբան, ապա հրաժարվել է նրա ծառայությունից և դիմել երկրորդին: Եշներվ մասնագիտական համերաշխության սկզբունքից՝ կարող է արդյոք փաստաբանը ընդունել վստահորդին: Եթե չկան պատճառներ, որոնք խոշնդոտում են օրիեկտիվ և բարձրորակ իրավաբան օգնության մատուցմանը, ապա փաստաբանը կարող է ընդունել վստահորդին: Սակայն փաստաբանը պարտավորվում է այդ մասին տեղեկացնել իր գործընկերոջը: Եվլոմմիության փաստաբանների վարքագիր կանոնագրքում նշվում է, որ նման դեպքերում երկրորդ փաստաբանը չի կարող իր գործունեությունը սկսել այնքան ժամանակ, քանի դեռ վստահորդը առաջին փաստաբանն չի վճարել վարձավճարը: Ո՞Դ փաստաբանների վարքագիր կանոնագրքում հարգանքի սկզբունքը յուրահատուկ բնորոշում ունի. «Փաստա-

բանը պարտավոր է բարեհամբույր վերաբերմունք դրսերել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ, զերծ մնալ կոպիտ, ազրեսիվ վերաբերմունքից, լինել հարգալից»: Ռուսական նողելը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում մասնագիտական համերաշխությանը, որը դրսերվում է գործնկերների մասնագիտության, անձի, հեղինակության և դիրքի նկատմամբ: Մասնագիտական համերաշխության հետ կապված ևս մի խնդիր է արժանի ուշադրության: Ենթադրենք, որ Փաստարանական պալատի անդամ փաստարաններից մեկը բույլ է տվել խախոտում, որի համար արժանի է կարգապահական պատասխանատվության, և այդ մասին տեղյակ է նրա գործընկերը: Արդյոք նա այդ մասին պետք է տեղեկացնի պալատին: Նման վարքագիծը չի համարվում մասնագիտական համերաշխության սկզբունքի խախոտում, որովհետև տվյալ դեպքում խոսքը գնում է պալատի հեղինակության պահպանության մասին: Բացի այդ, պահպանվում է նաև իրնբակառավարման սկզբունքը: Սակայն ինչպես վարդել, եթե փաստարանն արդեն հասցել է ուղղել իր սխալը մինչ տույժի նշանակումը: Հնարավոր է նաև, որ փաստարանն օրյեկտիվ հնարավորություն ունենա ուղղելու իր սխալը, սակայն գործընկերոց շտապ գործողությունները խափանեն դա:

Կոմպետենտություն, բարեխանություն և ազնվություն:

Ազնվության սկզբունքին ինչ-որ չափով արդեն անդրադարձել եմ: Սույն սկզբունքը փաստարանին առաջադրում է մի շարք պահանջներ.

- փաստարանների կողմից արվող գնահատականները, նրանց դիրքորոշումը և կարծիքը պետք է լինեն օրյեկտիվ,
- հարգաից վերաբերմունքի դրսերում այլ անձանց, նրանց իրավունքների, հեղինակության, պատվի նկատմամբ,
- խարեւության և անօրինականության բացառում. փաստարանը պարտավոր է իրավաբանական օգնություն ցույց տալ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Բարեխանության սկզբունքի համաձայն՝ փաստարանը պարտավոր է բարձրորակ իրավաբանական օգնություն ցույց տալ դիմորդին: Նա պետք է իրենից կախված ամեն ինչ անի ցանկալի արյունքին հասնելու և վստահորդի շահերը պահտպանելու համար: Ծիշու է, փաստարանի համար վստահորդի շահերը ամեն ինչից վեր են, բայց ամեն ինչի փոխարեն չեն: Հետևաբար, մատուցվող ծառայությունը պետք է իրականացվի միայն սահմանված պարտականությունների շրջանակներում և օրենքին խիստ համապատասխան:

Կոմպետենտությունը կամ ձեռնիասությունը ենթադրում է տվյալ գործի կապակցությամբ համապատասխան գիտելիքների, հմտության, փորձի առկայություն, օրենսդրական դրույթների իմացություն, պրակտիկայի ուսումնասիրություն, օրենսդրական գոփիխություններին տեղեկացվածություն, գործի հանգամանքների մանրազնին ուսումնասիրություն: Բացի այդ, փաստարանը պետք է կարողանա օրյեկտիվորեն գնահատել իր կոմպետենտության մակարդակը: Բավականաչափ ձեռնիասության բացակայության դեպքում փաստարանը պետք է այդ մասին տեղեկացնի հաճախորդին և իրավունք ունի իրաժարվել գործից, եթե վստահ չէ, որ կհասնի ցանկալի արյունքի: Հաճախորդի համաձայնությամբ նա կարող է նաև խորհրդակցել այլ փաստարանների կամ մասնագետների հետ՝ իր կոմպետենտության մակարդակը բարձրացնելու նպատակով: Հնարավոր է նաև համագործակցություն այլ փաստարանի հետ: Տվյալ դեպքում վստահորդը պետք է տալ իր համաձայնությունը. մեծանում է նաև վարձավճարի չափը:

Բարեխանությանը վերաբերող հիմնահարցերից է, օրինակ, այն դեպքը, եթե փաստարանը ունի մի քանի վստահորդ, իսկ նրան դիմում է նաև մեկ որիշը: Արդյոք փաստարանը պետք է ընդունի նրան: Չէ՞ որ նա արդեն գրավված է այլ գործերով: Կարո՞ղ է արյուն նա բարձրորակ իրավաբանական օգնություն ցույց տալ նոր վստահորդին: Այս ամենը կախված է գործերի բարդությունից, քանակից, բնույթից, փաստարանի ընդունակություններից: Եթե նա գտնում է որ իր ձեռքի տակ եղած գործերի բազմաքանակությունը մատուցվող ծառայության որակի վրա չի կարող ազդել, այդ դեպքում հաճախորդին կարող է ընդունել:

ՀՀ «Փաստարանների վարքագծի կանոնագիրը» կոնպետենտության վերաբերյալ նշում է, որ փաստարանը պետք է ստանձնի գործ, եթե իր մասնագիտական գիտելիքներն ու իրազեկությունը չեն կարող նպաստել գործի հաջող ավարտին: Ընդունելով հանձնարարությունը՝ փաստարանը պետք է վստահ լինի իր կոմպետենտության մեջ և «խնդիրներ չունենա այդ հարցում»: Վերջին արտահայտությունը մտահոգություն է պատճառում և բավականին անհասկանալի է: Փաստարանը կարող է նաև գիտելիքի որոշակի պակաս ունենալ, սակայն հաջողությամբ լրացնել այն՝ օգտվելով գրականությունից կամ դիմելով այլ փաստարանների օգնության: Բարեխանության վերաբերյալ Եվրոպիայի փաստարանների վարքագծի կանոնագիրը նշում է, որ, թեև, փաստարանը պետք է իրենից կախված բոլոր միջոցները ձեռնարկի ցան-

կայի արդյունքին հասնելու համար, սակայն, միևնույն ժամանակ, չպետք է դուրս գա իր պարտավորությունների շրջանակից: Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էթիկայի տիպային կանոններում կանոնակարգվում է կոմպետենտության հետ կապված մի հետաքրքի հիմնախնդիր. Երկու փաստաբաններից որ՝ մեկին տալ նախընտրությունը գործի տրամադրման հարցում, եթե նրանք ունեն փորձի, հմտությունների և տեղեկացվածության տարրեր մակարդակ: Փաստաբանը կոմպետենտ է, եթե ունի հմտությունների, գիտելիքների և փորձի այնպիսի շրջանակ, որի առկայությունը կապահովվի գործի լուծման պատշաճ բարձր մակարդակը: Երիտասարդ փաստաբանը կարող է չունենալ երկարամյա փորձ և խորը հմտություններ, սակայն իր գիտելիքների առումը կարող է չզիջել ավելի փորձառու փաստաբանին՝ հիմք ընդունելով փաստաբանական գործունեությունը կարգավորող ակտերը և դրան վերաբերող աշխատությունները: Այսինքն, նա կարող է ի վիճակի լինել զրապես տվյալ գործով:

Վերոնշյալ երեք սկզբունքներն են (կոմպետենտություն, բարեխղճություն, ազնվություն) սերտորեն կապված են գործի ընտրության իրավունքի հետ: Առավել նպատակահարմար է հետևյալ երեք պայմանների առկայության դեպքում ընտրել գործը:

- օրինականություն,
- ապացույների համակցություն,
- գործի դատական հեռանկարը:

Ապացույցների համակցությունը կարեոր նշանակություն ունի, քանի օրինական, սակայն չիմնավորված գործում հնարավոր չէ հաղթանակ տանել: Անօրինական գործերով փաստաբանը ընդիմանապես իրավունք չունի զրապելու: Ինչ վերաբերում է գործի լուծմանը և նրա հետագա ընթացքին, հնարավոր են դեպքեր, երբ հաղթանակ տարվի, սակայն առաջադրված պահանջը չբավարարվի: Օրինակ՝ երբ պարտապանից, որը սնանկ է ճանաչվել, հետ են պահանջում պարտը, սակայն նա ի վիճակի չէ այն վերադարձնելու: Դատարանը որոշում է կայացնում, որ պարտապանը իսկապես պարտավոր է վճարել, և, ըստ Էուրյան, գործում հաղթանակ է տարպում, սակայն պարտատիրոջն այդպես ել ոչինչ չի վճարվում:

Նոյնինակ այն դեպքերում, երբ չկա ապացույցների բավարար շրջանակ, կամ ակնհայտ է, որ գործի հետագա լուծմանը որևէ պահանջ չի բավարարվի, փաստաբանը կարող է վարել գործը, սակայն միայն այն դեպքում, երբ փաստահորդը վերոնշյալ պայմաններին ծանոթ է և գործին հետագա ընթացք տալու իր մտադրությունը չի փոխել:

Գործի ընտրություն կատարելիս փաստաբանը պետք է հիմք ընդունի կոմպետենտության մակարդակը: Քննարկելով այն հարցը, արդյոք գործի ընտրությունը փաստաբանի համար իրավունք է, բե պարտականություն՝ կարող եմ ասել, որ եթե փաստաբանը հիմնվում է օրյեկտիվ պատճառների վրա, ապա նա կարող է նաև գործն ընդունելուց հրաժարվել: Այդպիսիք են համարվում փաստաբանի հիմնադրյան, նրա անկոմպետենտության և այլ պատճառները: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ, խուսափելով ավելորդ խոչընդոտներից, փաստաբանը հրաժարվում է գործը ընդունելուց՝ վկայակոչելով ինչ-որ պատճառներ, որոնք տվյալ դեպքում սուբյեկտիվ բնույթ են կրում:

Թեև վճարովիրյունը փաստաբանական գործունեության սկզբունք է, սակայն վճարի համաշխատության և արդարացիության սկզբունքը պատկանում է էթիկական սկզբունքների բվին: Վերջինս կանոնագրում ընդիմանապես տեղ չի գտել: Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էթիկայի տիպային կանոններում սահմանվում են վարձավճարի իրականացման տարբեր ձևեր.

- կոնկրետ որոշված գումար,
  - ժամանակար,
  - մոտսավոր որոշված վճար,
  - վճարում կանխավճարով,
  - գումարի վճարում՝ կախված արդյունքից (տոկոսային հարաբերակցություն),
  - փստահորդին պատկանող սեփականության որոշակի մասով վճարում կատարելով:
- Կանոնագիրը կանխարգելում է չարաշահումների կատարումը՝ սահմանելով, որ:
- տոկոսային բաժնով գումարի վճարումը չի կարող գերազանցել սահմանված տոկոսադրույթի չափը,
  - փաստաբանը չի կարող անհիմն երկարաձգել գործը՝ հավելյալ ժամանակար ստանալու նպատակով,

- կանխավճարով վճարման դեպքում, եթե վստահորդը հրաժարվում է փաստաբանի ծառայությունից, ապա փաստաբանը պետք է վերադարձնի կանխավճարի այն մասը, որի դիմաց նա ծառայություն չի մատուցել,
- մոտավոր որոշված վճարի դեպքում արդյունքին հասնելիս վճարվում է ընդհանուր և մոտավոր գումարների տարրերությունը:

Ավելորդ անախորժություններից խուսափելու համար փաստաբանը պետք է վարձավճարի հաշվարկ կատարի և այն գրավոր տեսքով ներկայացնի վստահորդին: Հարկ եմ համարում նշել, որ փաստաբանը ձեռներեց չէ, չի իրականացնում առևտրային գործունեություն, շահույթ չափուի հետապնդի, հետևաբար նրա ջանքերը չպետք է ուղղված լինեն առավելագույնն շատ վարձավճար ձեռք բերելուն: Վճարի չափը սահմանելիս հաշվի են առնվում հետևյալ պայմանները.

- ստացված արդյունքը,
- կատարված աշխատանքի ծավալը,
- գործի բարդությունն ու բնույթը,
- վստահորդի կողմից սահմանված արագացված ժամկետները,
- արդյոք վարձավճարը պայմանական է սահմանված, թե կոնկրետ,
- այլ պայմաններ:

Եթե փաստաբանը միևնույն գործի կապակցությամբ օգնություն է ցույց տալիս մի քանի վստահորդների, ապա վարձավճարը պետք է բաշխվի նրանց միջև՝ ըստ համաշաբության սկզբունքի:

Քննարկենք մի դեպք, երբ վստահորդը հրաժարվում է մի փաստաբանից և դիմում մյուսի օգնությանը: Եվրոպիության փաստաբանների վարքագրի կանոնագրքի համաձայն՝ տվյալ դեպքում երկրորդ փաստաբանը ոչ միայն պետք է տեղեկացնի առաջինին, այլև, ելնելով հարգանքի սկզբունքից, դիմի վստահորդին՝ առաջին փաստաբանին վարձավճարը վճարելու կապակցությամբ:

Ներպետական կարգով ամրագրված չէ նաև փաստաբանական գործունեության գովազդման սահմանափակության սկզբունքը: Այն սերտորեն առնչվում է գաղտնիության սկզբունքի հետ: Բանն այն է, որ եթե փաստաբանը գովազդում է իր գործունեությունը, հնարավոր է, որ այդ ընթացքում ներկայացվեն այնպիսի տեղեկություններ, որոնք փաստաբանական գաղտնիքի մասն են կազմում:

Նշեմ, որ Ֆրանսիայում օրենքով արգելված է փաստաբանական գործունեության գովազդումը: Սակայն Ռուսաստանում սույն սահմանափակումը ավելի մեղմ է դրսևորվում: Այսուեղ արգելվում է գովազդումը, սակայն չի արգելվում գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ տրամադրելը: Իսկ ինչպես իմանա՞լ ինչ տեղեկություններ է կարելի տալ և ինչ ձևով պետք է դա իրականացվի:

Օրինակ՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էթիկայի տիպային կանոններում փաստաբանը միության կողմից ենթարկվել է կարգապահական պատասխանատվության գովազդում իրականացնելու համար: Նա իր գովազդը տեղադրել էր լուցկու տուփերի վրա՝ նշելով, որ եթե ինչ-որ մեկն օգնության կարիք է զգում, նրա ճիշտ ընտրությունը հենց իրեն դիմելն է: Այսուեղ և ձևակերպումն է սխալ եղել, քանի որ օգտագործվել են ոչ համապատասխան արտահայտություններ, և գովազդման ձևն է եղել ոչ նպատակահարմար: Եթե փաստաբանական ծառայության գովազդները հանդիպեն լուցկու տուփերի, շերի և այլն վրա, դրանով կնեմնացվի փաստաբանության դերը հասարակության աշքերում, վնաս կապատճառվի նրա հեղինակությանը:

Փաստաբանը չպետք է «հաճախորդների որս իրականացնի»: Հիշեցնեմ, որ նրա աշխատանքը չի կրում առևտրային բնույթ և շահույթ չափությունների:

Սակայն վերը նշվածից չի կարելի եզրակացնել, որ փաստաբանը իր գործունեության մասին չի կարող տեղեկություններ ներկայացնել: Նա դա կարող է անել, բայց միայն սահմանափակ ձևով՝ գործելով մի շարք պահանջներին համապատասխան:

Այդ պահանջներն են:

- փաստաբանական գործունեության գովազդումն անբոլյատրելի է, եթե ներկայացվում են այնպիսի տեղեկություններ, որոնք համարվում են փաստաբանական գաղտնիք,
- եթե գովազդումը վնասում է փաստաբանի անկախության սկզբունքին, նրան դնում նյութական կամ բարոյական կախվածության մեջ,

- Եթե փաստաբանը նախապես խոստանում է հասնել արդյունքի, որը կախված չէ նրա գործունեությունից,
- Եթե գովազդում փաստաբանը համեմատվում է մյուս փաստաբանի հետ,
- Եթե օգտագործվում են փաստաբանության՝ որպես ինստիտուտի, կամ Փաստաբանական պյառատիկ կողմից կիրառվող սիմվոլիկ նշաններ, խորհրդանշիներ:

Ծիշտ է, մինչ այժմ ներկայացված էրիկական սկզբունքները և դրույթները մեծ դեր են խաղում փաստաբանական գործունեության կանոնակարգման դրուտում, սակայն դրանց շարքում հատկապես աչքի է ընկնում փաստաբանական օգնության ցուցաբերման անթույլատրելիությունը շահերի բախման առկայության դեպքում։

Ընդ որում, նշեմ, որ շահերի բախումը տարրեր կերպ կարող է արտահայտվել։ Շահերի բախում կարող է լինել վստահորդի և փաստաբանի միջև։ Փաստաբանը պարտավոր է գործել՝ ելնելով վստահորդի շահերից։ Սակայն այն դեպքերում, երբ փաստաբանը ձեռք է բերում ինքնուրույն շահ, երբ երկու շահերը իրաք չեն համապատասխանում, և երբ վստահորդի շահը անօրինական բնույթ է կրում, փաստաբանական ծառայության մատուցումը կարող է դադարեցվել։

Պատճառն այն է, որ վերոնշյալ հանգամանքները խոչընդոտում են իրավաբանական օգնության պատշաճ ցուցաբերմանը։

Բախումը կարող է լինել նաև այն դեպքերում, երբ վստահորդները մի քանիսն են։ Այս դեպքում հնարավոր է, որ բախվեն նրանց շահերը։ Եթե առաջանում է այդպիսի բախում, փաստաբանը ի՞նչ վարքագիծ պետք է դրսուիր։ Անկավարելով ՀՀ «Փաստաբանական վարքագիծի կանոնագրի» հոդված 3.3-ով՝ կարող են ասել, որ փաստաբանն իրավունք չունի ներկայացնելու երկու վստահորդների շահերը, որոնց միջև կա բախում կամ առկա է բախման ռիսկ։ Բացի այդ, փաստաբանը, ըստ կանոնագրի, չպետք է ներկայացնի նոր վստահորդի շահերը, եթե դա նախկին և նոյն վստահորդների շահերի բախում է։ Այս դեպքում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է բացառություն։ Եթե նախկին վստահորդը համաձայն է, ապա շահերի բախման դեպքում անգամ փաստաբանը կարող է ներկայացնել նոր վստահորդի շահերը։

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էրիկայի տիպային կանոններում այս հարցին ավելի խիստ կարգավորում է տվել։ Համաձայն կանոնագրի՝ եթե վստահորդների միջև կա շահերի բախում, անկախ որևէ հանգամանքից, փաստաբանին արգելվում է ներկայացնել նրանց երկուսի շահերը։ Կանոնագիրը սահմանում է միայն, որ վստահորդների շահերի բախման դեպքում փաստաբանը կարող է հանդս գալ միջնորդի դերում։

Բացի այդ, նշվում է, որ շահերի հակասության դեպքում, անգամ եթե երկու կողմերը տվել են իրենց համաձայնությունը և ցանկանում են, որ փաստաբանը նրանց երկուսին էլ օգնություն ցույց տա, բայց փաստաբանի կարծիքով, դա կխախտի կողմերից որևէ մեկի շահերը, նա պետք է հրաժարվի։ Այս դեպքում հարց է առաջանում, թե արդյո՞ք նա պիտի հրաժարվի օգնություն ցույց տալուց բոլոր վստահորդներին, թե՞ միայն մի կողմին։ Դա կախված է իրավիճակից։ Եթե նրա վստահորդների տեսքով ի սկզբանե հանդես են եկել մի քանի հոգի, ապա նա պիտի հրաժարվի բոլորից։ Իսկ եթե փաստաբանը սկզբում օգնություն էր ցույց տալիս մի վստահորդի, ապա նրա օգնությանն է դիմում նաև մյուսը, և երկուսի միջև կա շահերի բախում, ապա փաստաբանը պետք է հրաժարվի երկրորդից։ Մյուս կողմից, շահերի բախումը տարրեր կարող է լինել։ Խորը զնում է այն բախման մասին, որը հենարավոր չէ հաղթահարել՝ առանց դրանցից մեկի ուժնահարման։ Քննարկենք հետևյալ դեպքը։ Ընտանիքը հրավիրում է փաստաբանն՝ կտակ կազմելու հարցով։ Ծուտով պետք է մահանա հարուստ տատիկը, և ընտանիքի յուրաքանչյուր անդամ ցանկանում է իմանալ, թե որքան է նրան բաժին հասնելու։ Ընտանիքի բոլոր անդամներն ունեն ընդհանուր շահ, դա կտակից բաժին ստանալն է։ Բայց քանի որ նրանցից յուրաքանչյուրը ձգտում է որքան հենարավոր է շատ բաժին ստանալ, տեղի է ունենում շահերի բախում։ Տվյալ դեպքում կտակ ստանալու ընդհանուր հարցով փաստաբանը կարող է օգնել, բայց բաժին հետ կապված հարցերով յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր փաստաբանը։ Ընդ որում, սկզբում հրավիրված փաստաբանը կողմերից որևէ մեկին անհատական օգնություն ցույց տալ չի կարող։

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության մասնագիտական էրիկայի տիպային կանոնները նաև նախատեսում են, որ փաստաբանը չի կարող օգնություն ցույց տալ վստահորդին, եթե նրա շահերը արմատապես հակասում են իր նախկին վստահորդի շահերին՝ անկախ ժամկետային սահմանափակումից։ Իմաստն այն է, որ առաջին վստահորդի դեմ կարող են օգտագործել այնպիսի տեղեկություններ, որոնք նա տրամադրել է որպես փաստաբանական գաղտնիք, որոնք կարող են նրան վնաս պատճառել և բխում են երկրորդ վստահորդի շահերից։

Ծահերի բախման երրորդ դեպքն այն է, եթե կա հակասություն փաստաբանի և փաստաբանական գրասենյակի միջև: Ենթադրենք, որ Ա փաստաբանը Բ վստահորդին ցույց է տվել իրավաբանական օգնություն: Ա փաստաբանը աշխատում է Պ փաստաբանական գրասենյակում: Եվ եթե Գ վստահորդը, որի շահերը հակասում են Բ վստահորդի շահերին, երբեմ դիմի նույն գրասենյակում աշխատող փաստաբաններից որևէ մեկին, նա իրավունք չունի օգնություն ցույց տալու, քանի որ Ա փաստաբանի հետ նույն գրասենյակում է աշխատում: Սակայն եթե նրանք լինեն տարրեր գրասենյակների աշխատակիցներ, կամ Ա փաստաբանը դուրս գա Պ գրասենյակից, իրավիճակը կլինի ճիշտ հակառակը:

## Վերջաբան

Ամփոփելով միտքս՝ նշեմ, որ մեր՝ «ապագա սերնդի» աշխատանքը բավականին ընդարձակ և լայնածավալ է փաստաբանական կառույցի կայացման և զարգացման ոլորտում: Եվ եթե ներպետական ակտերը չեն պարունակում փաստաբանական վարքագիծը կարգավորող դեկազր դրույթների ողջ շրջանակը, դա դեռևս ամենացավալին չէ: Ավելի ցավալի է, եթե ակտերում առկա շարադրանքը չի գործում՝ հանդես գալով սույն որպես «թղթին հաղորդված բարի ցանկություն»:

Բայց այդ, ՀՀ «Փաստաբանների վարքագիծի կանոնագրքում» տեղ են գտել նաև դրույթներ, որոնք երիկական սկզբունքների շարքում պետք է որ չինեին:

Առաջարկում եմ, օրինակ, ՀՀ «Փաստաբանների վարքագիծի կանոնագրքի» «Գլխավոր սկզբունքներ» գլխից դրույթը բերել փաստաբանական գործունեության անկախության և փաստաբանների՝ օգնականներ և փորձնակներ ունենալուն նվիրված դրույթները, քանզի դրանք փաստաբանական գործունեության սկզբունքներ են, այլ ոչ թե երիկական: Առաջարկում եմ նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ում ընդգրկել ոչ թե օրինապահության, այլ օրինականության սկզբունքը:

Հաշվի առնելով աշխատությունում տեղ գտած քննադատությունները և վերլուծությունները՝ առաջարկում եմ ՀՀ «Փաստաբանների վարքագիծի կանոնագրքի» «Գլխավոր սկզբունքներ» գլխում ընդգրկել նաև կարևոր նշանակություն ունեցող այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

- փաստաբանի և վստահորդի միջև փոխադարձ վստահության,
- փոխադարձ հարգանքի և հանդուժողականության սկզբունքը, որն արտահայտվում է փաստաբանների, նրանց և դատարանի, նրանց և վստահորդների միջև ծագող հարաբերություններում,
- կոմպետենտության (ձեռնիասության),
- բարեխսդության,
- ազնվության սկզբունքները:

Առաջարկում եմ նաև մանրամասնել շահերի բախման դեպքում փաստաբանական ծառայության անքույլատրելիությունը սահմանող սկզբունքը: Հակառակ դեպքում համընդհանուր ճանաչում ստացած և կիրառման մեջ կարևորություն ունեցող սկզբունքները չեն ամրագրվում ներպետական ակտերում, ինչի արդյունքում փաստաբանական վարքագիծը պատշաճ երիկական կարգավորում չի ստանում:

Հուսով եմ, որ աշխատությունն կարողացավ Ձեր ուշադրությունը ըստեմի փաստաբանական գործունեության գոնե առավել կարևոր դրույթներին և արտացոլեց դրանք իրականությանը համապատասխան:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Է. Նադահանական աշխատանքը՝ պատճենագիրը կանոնագրքի համապատասխան գործունեության գոնե առավել կարևոր դրույթներին և արտացոլեց դրանք իրականությանը համապատասխան:
2. ՀՀ փաստաբանների վարքագիծի կանոնագրքը
3. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը
4. Եվրոպական փաստաբանների վարքագիծի կանոնագրքը

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ներածություն

Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն կերտելու ճանապարհին առանձնահատող նշանակություն է ծեռու բերում մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովությը: Պետությունը, որն իրեն հոչակում է այդպիսին կամ գոնե հեռահար նպատակ է հետապնդում այդպիսին դաշնարկ համար, անպայմանորեն պետք է բոլոր միջոցները ձեռնարկի մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում առավելագույնին հասնելու համար: Հայաստանի Հանրապետությունը ևս, որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, իր վրա պարտականություն է կրում յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում: Նշենք նաև, որ ՀՀ-ն այդ պարտականությունը ամրագրել է նաև իրավական ակտերով: Դրանցից ամենաառաջնայինը և զիսավորը ՀՀ սահմանադրությունն է, որի 4-րդ հոդվածում էլ հենց ամրագրված է այդ դրույթը: Այդ տեսանկյունից քննելով սահմանադրությունը, չի կարելի չնշել այն հանգամանքը, որ այդ իրավական ակտով ոչ միայն սահմանվում է պետության՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման պարտականությունը, այլ նաև յուրաքանչյուրի իրավունքը օրենքով չարգելված բոլոր միջոցներով իր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու (սահմանադրության 38, 39 հոդվածներ): Սահմանադրության 38 հոդվածի 2-րդ պարբերությամբ երաշխավորվում է նաև իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը:

Սարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, հանդիսանալով յուրաքանչյուր ժողովրդավարական պետության առաջնային խնդիրներից մեկը, բնականարար չի կարող դուրս մնալ միջազգային հանրությանը հուզող հարցերից շրջանակներից։ Դեռ ավելին, միջազգային հանրությունը ցանկացած գործության դիմելիս միտված է մարդու իրավունքների և ազատությունների առավելագույնս պաշտպանությանը։ Այս առնչությամբ հարկ է նշել, որ միջազգային մի շարք կազմակերպություններ մշակել և ընդունել են տարրեր փաստարդեր, որոնք ամրագրում են ինչպես իրավունքներ և ազատություններ, այնպես էլ դրանց արդյունավետ իրացման երաշխիքներ։ Այդպիսով, միջազգային հանրությունը փորձում է խրախուսել պետությունների ջանքերը՝ նարդու իրավունքների և ազատությունների և ազատությունների պաշտպանության գործում։ Իրավունքներ, ազատություններ և դրանց իրականացման երաշխիքներ պարունակող միջազգային փաստարդերից արժանահիշատակ են հետևյալները։

- Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիր (ՍԱԿ 1948 թվական),
  - Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (1950 թվական),
  - Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989 թվական),
  - Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թվական) և այլն:

Սակայն պետք է փաստել, որ մի բան է տարրեր իրավական ակտերով ամրագրել իրավունքներ և ազատություններ, և բոլորովին այլ բան է գործնականում դրանց իրականացումը ապահովել, ինչպես նաև խախտման կամ ենթադրյալ խախտման դեպքում քայլեր ձեռնարկել դրանք վերականգնելու համար: Հավելենք, որ յուրաքանչյուր պետություն իր վրա պողիսիվ պարտականություն է վերձնում մարդու իրավունքները և ազատությունները պաշտպանելու: Չնայած դրան՝ պետությունը չի կարող յուրաքանչյուր դեպքում իր ուժերով մարդու իրավունքները և ազատությունները խախտվելիս ինքնուրույն ապահովել դրանց պաշտպանությունը և վերականգնումը: Խոսքն իհարկե իրավաբանական օգնություն ցույց տալու մասին է (այս իրավունքը ամրագրված է ՀՀ սահմանադրության 40-րդ հոդվածով): Հայտնի է, որ քաղաքացուն անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքում պետությունն ինքն է վճարում դրա դիմաց: Իսկ յուրաքանչյուր դեպքում նման օգնության ապահովումը անհնարին է դառնում զուտ ֆինանսական առումով և նման «ճոխություն» իրեն կարող է բույլ տալ միայն գերհագեցած բյուջե ունեցող պետությունը: Ինչպես տեսնում ենք, այս տարրերակը, այսինքն՝ յուրաքանչյուրի համար իրավաբանական օգնությունն անվճար դարձնելը, ՀՀ-ի դեպքում բացառվում է: Եվ ոչ միայն ՀՀ-ի: Աշխարհի շատ զարգացած երկրներ, որոնք իրականում միզուցել և հնարավորություն ունենային գոնեն իրենց պետության քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու, այդ քայլին չեն դիմում՝ այդպիսի օգնություն տրամադրելով միայն սահմանափակ քվով անձանց: Իսկ մնացած մասին իրավաբանական օգնության տրամադրումը բողնում են մասնավոր սեկտորին: Հենց այստեղ էլ կարևորվում է փաստաբանի ինստիտուտը, որի գոյության հիմքերից մեկն էլ վերևում շարադրված հանգամանքներն են: Նաև պետք է նշել, որ փաստաբանի ինստիտուտը և ընդանրապես փաստաբանությունը օրենսդրություն կարգավորվում է պետության կողմից տարրեր ակտերի միջոցով: ՀՀ-ի դեպքում նման կարգավորումը իրականացվում է օրենքի ձևով: Մինչև «Փաստաբանության մասին» օրենքի ընդունումը (2004 թվական), գործում էր 1998թ. «Փաստաբանական գործունեության մասին» օրենքը: Նոր օրենքով արմատական փոփոխության ենթարկվեց այս համակարգը, ինչի մասին կիսումի հետագա շարադրանքում: Այսպիսով՝ փաստաբանությունը օրենսդրություն կարգավորվելով պետության կողմից, առանձնահատուկ կարևորություն է ստանում մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից և դրան վերաբերող մի շարք հարցերի պարզաբանումը դառնում է հրատապ: Նման ուղղագրություն ունի նաև մեր ոսումնաշիրությունը:

## Նկարագրական մաս

Մինչ փաստաբանությանն առնչվող որոշակի հարցերի պարզաբանմանն անցնելը, մեր կարծիքով, անհրաժեշտ է նախ և առաջ սահմանել փաստաբանության հասկացությունը, այսինքն՝ նշել, թե ինչ է օրենսդրությունը հասկանում փաստաբանություն ասելով կամ, թե ինչպիսի սկզբունքներ է նախանշել վերջինս գործունեության կապակցությամբ: Նախ ասենք, որ «Փաստաբանական գործունեության մասին» 1998թ. հունիսի 18-ի օրենքը ընդանրապես դրույթ չի պարունակում փաստաբանության հասկացության մասին, այլ միայն սահմանում է փաստաբանական գործունեության հասկացությունը: Ի տարրերություն դրան, 2004թ. դեկտեմբերի 14-ի նոր օրենքով փաստաբանական գործունեության հասկացության հետ մեկտեղ տրվում է նաև փաստաբանության հասկացությունը: Այսպես, հանձնայն նշված օրենքի հոդված 3-ի. «Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման համակարգի մեջ» (Տե՛ս, ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», Երևան 2005, հոդված 3, 1-ին մաս): Այս սահմանումը միտք է պարունակում նաև փաստաբանության անկախ լինելու մասին: Լինելով ինքնուրույն ինստիտուտ՝ փաստաբանությունը ունի նաև իր գործունեության սկզբունքները, որոնք ամրագրված են օրենքով: Վերոհիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով տրվում են այդ սկզբունքները, այն է՝ անկախությունը, օրինապահությունը, ինքնակառավարումը և փաստաբանների իրավահավասարությունը: Այս առումով ևս նոր օրենքը մեկ քայլ առաջ է հնի նկատմամբ:

Ինչպես 1998թ. հունիսի 18-ի օրենքով, այնպես էլ մինչ այդ գործող օրենքով գոյություն ուներ փաստաբանների գործունեությունը կարգավորող (արտոնագիր տրամադրելը, կարգապահական տույժի ենթարկել, հատուկ արտոնագիր տրամադրելը) մարմին: Մինչև 1998թ. օրենքը

նման լիազորություններով օժտված էր փաստաբանների կողեզիան, իսկ դրանից հետո՝ փաստաբանների միուրյունը, որը կոլեգիայի իրավահաջորդն էր: 2004թ. օրենքով արդեն ննան նարմին է սահմանվում ՀՀ փաստաբանների պալատը, մինչև որի կազմավորումը դեռևս գործելու են փաստաբանական միուրյունները: Հանդիսանալով մեկ ամբողջական մարմին՝ փաստաբանների պալատն ունի իր կառուցվածքային ստորաբաժանումները: Այսպես, համաձայն «Փաստաբանության մասին» օրենքի 8-րդ հոդվածի, դրանք են փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը, պալատի խորհուրդը, կարգապահական և որակավորման հանձնաժողովը: Նախկինում և ներկայում գործող օրենքի իրավահամեմատական վերլուծությունը կատարելիս նորից պատեի առաջադիմական է վերջին օրենքն այն առումով, որ ոչ միայն սահմանում է փաստաբանների պալատի կառուցվածքային մարմինները, այլև առանձին հոդվածներով կանոնակարգում է դրանց իրավասությանը վերապահված հարցերի շրջանակը: Նախկին օրենքում նոյնարովանդակ որևէ դրույց ամրագրված չէր: Փաստաբանների պալատի մարմինների գործունեությունը ծավալել, նանավանդ որ յուրաքանչյուր մարմնի լիազորությունները հստակորեն նշված են օրենքում: Բացի այդ, նոր օրենքով սահմանվում են նաև փաստաբանների պալատի մարմինների՝ միմյանց զապելու և հակակշռելու մեխանիզմները: Բավական է նշել ընդամենը մեկ օրինակ. փաստաբանների պալատի խորհուրդը որոշում է ընդունում փաստաբանի արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին, սակայն այդ հարցի առնչությամբ կարգապահական հանձնաժողովը եղանակացություն է տալի, այսինքն՝ խորհուրդը միանձնյա չի որոշում արտոնագրի ուժը կորցրած ճանաչելը:

Ըննարկելով փաստաբանությանն առնչվող հարցերը՝ ամենաառաջնային հարցերից պետք է դիտել և քննարկել փաստաբանի ինստիտուտը: Ինչպես ին, այնպես էլ նոր օրենքը հստակորեն տալիս է փաստաբանի հասկացությունը: Այսպես, փաստաբան է համարվում օրենքով սահմանված կարգով փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստացած անձը: Իսկ արտոնագիր ստանալու կարգը սահմանված է «Փաստաբանության մասին» օրենքով: Նախ նշենք, որ արտոնագիր կարող է ստանալ անձը, որն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, իրավաբանի մասնագիտությամբ առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ, հաջողությամբ է հանձնել որակավորման քննությունները և ունի հանապատասխան վկայագիր (Տե՛ս նույն օրենքը, հոդված 28): Այնուհետև, հավակնորդը փաստաբանների պալատին անդամագրվելու ցանկություն պարունակող դիմում է տալիս, որին կցվում է վկայագրի պատճենը: Մեկանյա ժամկետում որոշում է կայացվում ննան դիմումի վերաբերյալ: Դիմումը բավարարելուց հետո 5 օրվա ընթացքում հավակնորդին տրվում է արտոնագիր: Իսկ հասուն արտոնագիր տրամադրվում է վճռաբեկ դատարանում 5 տարի ժամկետով և ննան արտոնագիր է տրամադրում փաստաբանների պալատի նախագահը: Օրենքով նախատեսված է նաև, որ մեկ տարվա ընթացքում հասուն արտոնագիր կարող է տրվել ընդամենը 7 (յոթ) փաստաբանի:

Օրենքով ամրագրված են նաև փաստաբանի իմնական իրավունքներն ու պարտականությունները: Մասնավորապես, փաստաբանն ի բավունք է վերապահված ներկայացնելու կամ պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց ինչպես դատարանում, այնպես էլ տարրեր՝ մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում, դիմելու տարրեր այդ թվում նաև պետական մարմիններին, գործի հետ առնչություն ունեցող փաստաբարերը կամ դրանց պատճենները ստանալու պահանջով և այլն: Ինչ վերաբերվում է պարտականությունների մասին, պետք է նշել, որ փաստաբանը պարտավոր է նախ և առաջ ենթարկվել ՀՀ սահմանադրությանը, օրենքին և փաստաբանի վարքագիր կանոնագրին, չիրապարակել փաստաբանական գաղտնիքը, եթե դա չի պահանջում օրենքը, իր դիրքորոշումը համաձայնեցնել վատահորդի դիրքորոշման հետ (այս մասին ավելի մանրանասն և մասնագիտորեն է խոսում Ելա Գրինն իր «Փաստաբանի հոգեբանությունը» աշխատության մեջ, համաձայն որի փաստաբանը չի դիրքորոշում ընդունի առանց վատահորդի դիրքորոշման հետ համաձայնեցնելու): Սակայն այս պոստուլատից հնարավոր են շեղումներ, մասնավորապես, փաստաբանը կարող է ինքնուրույն դիրքորոշում ընտրել, եթե իր պաշտպանյալը դիմում է ինքնազրպարտանը (այս դեպքը նախատեսված է նաև մեր օրենքով), փորձում է առանց որևէ հիմքի մեղքը բարել այլոց վրա և այլն: Այս մասին առավել մանրանասն տես Ելա Գրիննի վերը նշված աշխատության մեջ, ինչպես նաև մուծել անդամակնարներ և մշտապես կատարելագործել իր գիտելիքները: Սակայն փաստաբանի իրավունքները և պարտականությունները սահմանելիս հաշվի չի առնվել մի կարևոր հանգամանք, այն է՝ փաստաբանի այս կամ այն փա-

բույրում գտնվելը: Դիցուք քաղաքացիական դատավարության ընթացքում որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի իրավական վիճակը բնականաբար տարբերվում է քրեական դատավարությունում որպես պաշտպան հանդես եկող փաստաբանի իրավական վիճակից: Փաստաբանի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները սահմանված են համապատասխան պրոցեսուալ նորմերով: Այս կարգը որոշակի տեսանկյունից դիտելով կարելի է արդարացված համարել զուտ այն պատճառով, որ եթե փաստաբանը, ասեմբ նաևնակցում է քրեական դատավարությանը, ապա նրա իրավական վիճակը պետք է սահմանվի տվյալ իրավունքի ճյուղի նորմերով, այլ ոչ թե նրա գործունեությունը կարգավորող օրենքով, ընդ որում այն մամրանասնորթյամբ և առանձնահատկություններով հանդերձ, ինչը կատարում են վարույթային նորմերը: Ինչևէ, առաջ անցնելով նշենք, որ իրավունքի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասը հանդիսացող քաղաքացիական և քրեական դատավարական իրավունքները բավականին հանգամանալից անդրադառնում են փաստաբանի իրավական կարգավիճակին: Այսպես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ քաղ. դատ. օր.) 6-րդ գլուխն ամբողջորթյամբ նվիրված է ներկայացուցչությանը: Համաձայն այդ նորմերի՝ դատարանում ներկայացուցիչ կարող է հանդես զայ հստակորեն ձևակերպված լիազորագիր ունեցող ցանկացած ոք: Ընդ որում դատական ներկայացուցչությունը վճարովիրացան սկզբունքով իրավասու է իրականացնել միայն փաստաբանը (տե՛ս, «Փաստաբանության մասին» 2004թ. օրենքի 5-րդ հոդվածը): Նման կարգ սահմանված չէր նախկին օրենքով:

Դատարանում ներկայացուցչի լիազորությունները ընկնում են որոշակի սահմանափակման տակ: Օրինակ՝ ներկայացուցիչն իրավունք չունի ստորագրելու հայցադիմումը, փոխելու հայցի առարկան կամ հիմքը և կատարել այլ դատավարական գործողություններ, որոնց սպառից ցանկը տրված է քաղ. դատ. օր-ի 42-րդ հոդվածով: Նույն հոդվածով նախատեսված է նաև, որ նշված յուրաքանչյուր լիազորությունն իրականացնելու համար պետք է այդ մասին լիազորագրում հատուկ նշում կատարված լինի: Իսկ լիազորագիրը պետք է հաստատված լինի նման իրավասություն ունեցող մարմնի կողմից: Ինչ վերաբերվում է քրեական դատավարությանը, ապա հարկ է նկատել, որ քրեական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ քր. դատ. օր.) ավելի մանրամասն է անդրադառնում պաշտպանի իրավական կարգավիճակին: Նախ և առաջ տրվում է պաշտպանի հասկացությունը, համաձայն որի դա նոյն փաստաբանն է, որը քրեական գործի վարույթի ընթացքում կասկածյալին կամ մեղադրյալին ցոյց է տալիս իրավարանական օգնություն: Այսուհետև քր. դատ. օր.-ը անդրադառնում է այն հանգամանքներին, որոնց դեպքում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Մասնավորապես, դրանցից են կասկածյալի կամ մեղադրյալի՝ պաշտպան ունենալու կապակցությամբ հայտնած ցանկությունը, ֆիզիկական կամ հոգեկան որևէ խանգարման պատճառով կասկածյալի կամ մեղադրյալի՝ իրենց շահերը և իրավունքները պաշտպանելու անկարողությունը, դատավարության լեզվին չտիրապետելը, կասկածյալի կամ մեղադրյալի անգործունակ լինելը և այլն: Թվարկած և օրենքով նախատեսված մնացած դեպքերում պաշտպանությունն իրականացվում է ՀՀ պետքուժի միջոցների հաշվին՝ փաստաբանին 1 ժամվա դիմաց վճարելով դատախազի 1 ժամվա աշխատավարձի չափով: Այս կարգը նախատեսված էր նախկին օրենքով: Իսկ «Փաստաբանության մասին» նոր օրենքը սահմանում է նոր կարգ, համաձայն որի վճարումը կատարվում է ամսեկան կտրվածքով՝ Երևան քաղաքի համայնքի դատախազի ամսական աշխատավարձի չափով (Տե՛ս, նշված օրենքը, հոդված 45): Ընդհանրապես անվճար իրավարանական օգնություն տրամադրելու համար նոր օրենքով նախատեսված է փաստաբանների պալատի կազմում ստեղծել մի նոր մարմին՝ հանրային պաշտպանի գրասենյակ, որը հայ իրականության մեջ նորություն է: Այդ մարմնի հիմնական լիազորությունն է քաղաքացու դիմումի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումի հիման վրա (եթե դիմումը բավարարվում է) գործ հանձնել հանրային պաշտպանին: Օրենքի համաձայն հանրային պաշտպան է համարվում այն փաստաբանը, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործում է հանրային պաշտպանի գրասենյակում: Այս մարմնի ստեղծմամբ, փաստորեն, փորձ է արվում անվճար իրավարանական օգնություն տրամադրելու համարգը դարձնել միասնական և կենտրոնացված: Կոնկրետ ոլորտում մասնագիտական միավորման ստեղծումը, մեր կարծիքով, դրական առաջընթաց է, որն էլ ավելի կրաքարացնի այդ ոլորտի գործունեության արդյունավետությունը:

Բացի նշված հանգամանքներից, քր. դատ. օր.-ն ամրագրում է այլ կարևոր դրույթներ և Այսպես, օրենսգրքով սահմանվում է պաշտպանի հիմնական իրավունքները և պարտականությունները: Պաշտպանն իրավունք ունի ծանորանալ մեղադրանքին, մասնակցել հարցանություններին, առանց քանակի և ժամանակի սահմանափակաման իր պաշտպանյալի հետ ունեալ տեսակցություններ, տարբեր փաստարդեր կամ դրանց պատճեներ ստանալու պահան-

զով դիմել տարրեր կազմակերպություններին, ծեռք բերել նյութեր և դրանք ներկայացնել գործին կցելու համար, հայտնել բացարկներ, հարուցել միջնորդություններ և այլն: Բացի իրավունքներից, քր. դատ. օր.-ը պաշտպանին վերապահում է նաև որոշակի պարտականություններ, որոնցից են պաշտպանյալի շահերին հակասող գործողությունների անքույլատրելիությունը, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ գործի հետ նրա առնչության շնորհումը, առանց նրա հանձնարարության բաղաքացիական հայցի ընդունման անրույլատրելիությունը և այլն: Ընդհանուր առմամբ, պաշտպանի վերը թվարկված իրավունքները և պարտականությունները բխում են «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված հիմնական իրավունքներից և պարտականություններից, քանի որ վերջիններս ունեն ընդհանուր բնույթ: Տարրերից գիծն այն է, որ քր. դատ. օր.-ը սահմանում է նաև քրեական գործի վարույթի ընթացքում փաստաբանի իրավունքների ու պարտականությունների առանձնահատկությունները:

Կրկին անցում կատարելով «Փաստաբանության մասին» օրենքին՝ հարկ ենք համարում կանգ առնել մի կարևոր հարցի վրա ևս: Խոսքը փաստաբանական գաղտնիք հանդիսացող ինֆորմացիայի և դրա հետ կապված առանձին հարցերի մասին է: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում գործող օրենքը հստակորեն տալիս է փաստաբանական գաղտնիքի հասկացությունը, դրա հրապարակման և այլնի հետ կապված հարցերի պատասխանները, որոնք գրեթե անփոփոխ են: Օրենքը փաստաբանական գաղտնիք է համարում վատահորդի կողմից փաստաբանի փոխանցված, ինչպես նաև փաստաբանի կողմից ինքնուրույն ծեռք բերված և հանրությանը անհայտ տեղեկություններն ու ապացույցները: Որպես կանոն փաստաբան իրավասուու չէ հրապարակել նշված տեղեկությունները: Սակայն այս հարցում օրենտիդը կատարել է որոշակի բացառություններ: Այսինքն, հնարավոր են օրենքով ամրագրված դեպքեր, երբ փաստաբանն իրավասու է հրապարակել փաստաբանական գաղտնիքը: Նման դեպքերի սպառիչ ցանկը տրված է օրենքով, համաձայն որի փաստաբանը հրապարակում է գաղտնիքը, եթե.

- Առկա է վատահորդի համաձայնությունը,
- դա անհրաժեշտ է նրա և վատահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար,
- առկա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն: Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ (Տե՛ս, նշված օրենքի 25-րդ հոդվածը):

Բացի վերը նշված երեք դեպքերից, ցանկացած այլ պարագայում փաստաբանական գաղտնիքը չի կարող հրապարակվել:

Այսպիսով՝ մանրամասն քննարկելով 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Փաստաբանության մասին» նոր օրենքը, կարելի է հանգել հետևյալ եղանակությանը. ՀՀ-ում ժողովրդավարական գործընթացների ակտիվացմամբ (հատկապես վերջին տարիներին) անհրաժեշտություն առաջացավ բարեփոխումներ կատարել մի շարք ոլորտները կանոնակարգող օրենսդրական ակտերում: «Փաստաբանության մասին» նոր օրենքը, անշուշտ, երկրում ծայր առած բարեփոխումների մի մասն է կազմում, որով փորձ է կատարվում ավելի ժողովրդավարացների նշված ոլորտը: Կասկած չկա, որ մեր հանրապետությունը հստակորեն բայեր է կատարում դեպի ժողովրդավար և բազմակարծիք հասարակություն, որտեղ հարգվում են մարդու իրավունքները և ազատությունները (սա ոչ միայն մեր կարծիքն է, նման կարծիք է արտահայտել նաև Եվրոպական իրավունքի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) (ավելի մանրամասն տես Կարծիք համար 221(2000)(1), կետ 6): Այս օրենքի ընդունումը մեկ անգամ ևս հաստատում է մեր պետության նման միտումները, քանի որ, մեր կարծիքով, նոր օրենքն ավելի ժողովրդավարական է և ավելի է համապատասխանում Եվրոպական ստանդարտներին: Այլ հարց է, թե օրենքն ինչպիսի կիրառում կգտնի և արդյոք այն իրեն կարդարացնի: Այս առումով կարելի կլինի խոսել օրենքի գործողության մեջ դնելուց առնվազն մեկ տարի անց, երբ հնարավոր կլինի քննարկել դրա՝ պրակտիկայով ստուգված դրական կամ բացարկան կողմերը:

## Եզրափակիչ մաս

Նախորդ բաժնում մանրամասն քննարկման ենթարկվեց ոչ միայն «Փաստաբանության մասին» նոր օրենքը, այլ նաև քրեական և բաղաքացիական դատավարության օրենսգրքերն այն մասով, որով վերաբերվում են փաստաբաններին կամ սահմանում են նրանց իրավավիճա-

կի առանձնահատկությունները: Ընդ որում, նոր օրենքը քննարկվեց նախկինում գործող օրենքի հետ համեմատելով: Այդ ամենը նպատակ էր հետապնդում պարզել այն օրենսդրական դաշտը, որում գործում է փաստաբանը և որով կարգավորվում է փաստաբանական գործունեությունը: Մեր կարծիքով, կատարված թեկուզ փոքրիկ ուստինապիտությունը ցույց տվեց, որ փաստաբանության և ընդհանրապես փաստաբանական գործունեության համար ՀՀ-ում ապահովված է բավարար օրենսդրական դաշտ: Թվում է, թե առանձնապես խնդիրներ չպետք է առաջանան նաև գործնական, պրակտիկ կյանքում: Սակայն իրավիճակը բոլորովին էլ այդպիսին չէ: Ընդհակառակը, իրական կյանքում փաստաբանությունը Հայաստանում գտնվում է մեղմ ասած անմիտքար վիճակում: Խոսքը հատկապես մարզերում տիրող իրավիճակի մասին է: Եվ ընդհանրապես, եթե խոսում ենք ՀՀ-ում փաստաբանության ներկա վիճակի մասին, ապա գոնեւ պայմանականորեն մեր պետության տարածքը պետք է բաժանել երկու մասի՝ մայրաքաղաք Երևանի և մնացած մարզերի: Հետևապես ներկա վիճակի քննարկումը պետք է իրականացվի Երևանի և մնացած մարզերի մասշտաբով: Ինչպես արդեն նշեցինք, չնայած բավարար օրենսդրական դաշտի առկայությանը, փաստաբանության ներկա վիճակը հեռու է գոհացուցիչ համարվելուց: Վիճակը թիշ թիշ շատ բարփոր է Երևանում: Այդ հանգամանքը կապված է Երևանի՝ ՀՀ տնտեսական, քաղաքական կենտրոնը լինելու հետ: Որպես ասածների պարզ ասկացույց, բավարար է նշել ընդամենը այն, որ մայրաքաղաքում գործում են բազմաթիվ ինչպես իրավախորհրդաստու կազմակերպություններ, այնպես էլ փաստաբանական գրասենյակներ, այն դեպում, երբ մարզերում նման գրասենյակներ եթե անգամ գործում են, ապա դրանց թիվը չի անցնում մեկ կամ երկուսից: Ծիշտ է, գործում են տարբեր իրավախորհրդաստու կազմակերպություններ, սակայն գուտ մասնագիտական գրասենյակներ, ցավոր սրտի, կամ չկան կամ էլ թվով շափականց սակավ են: Նման պայմաններում մարզերի քննակիշների մոտ լրացուցիչ խոշնդրությունը են առաջանում փաստաբանի օգնությանը դիմելու համար: Այս պարագայում խոսել փաստաբանության կայացած լինելու մասին, իհարկե շարժե:

Ինչպես յուրաքանչյուր երևոյթ, փաստաբանության ներկա վիճակը նույնպես, գոյություն չընի առանց պատճառների և իր հերթին էլ պատճառավորում է այլ երևոյթներ ևս: Եթե խոսքը տեղափոխենք խնդրո առարկայի շորջ, ապա դրանից առաջացած, դրանով պատճառավորված երևոյթներն անցանկալի են (օրինակ՝ մարդու իրավունքների և ազատությունների ոչ պատշաճ մակարդակով պաշտպանությունը): Այս դեպում գործում են փիլիսոփայական կարևորագույն կատարիդաներից պատճառահետևանքային կապերը, այսինքն՝ ոչ մի հետևանք առանց պատճառի չի ծնվում: Իսկ փաստաբանության ներկա վիճակը մենք համարում ենք հետևանք, որը արդյունք է տարբեր ինչպես օրինակ գոյություն ունեցող, այնպես էլ տուրքելով պատճառների: Բացի այդ, խնդրո առարկայի պատճառների պարզաբնումը մեզ հնարավորություն կտա ավելի խորը պատճերացում կազմել այս երևոյթի մասին, ինչպես նաև քայլեր ճեռնարկել այդ պատճառների վերացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարելավել փաստաբանության առկա վիճակը: Մեր կարծիքով նշյալ երևոյթի ներկային վիճակի պատճառները հետևյալներն են.

- քնակչության ծանր սոցիալ-տնտեսական վիճակը,
- քերահավատ վերաբերմունքը փաստաբանի ինստիտուտի վերաբերյալ,
- քնակչության իրավական անգրագիտությունը, այսինքն՝ իրավագիտակցության ցածր մակարդակը (չեն կարևորում փաստաբանի ինստիտուտը կամ էլ բացասական գնահատական են տալիս) և այլն:

Այս և այլ չնշված բազմաթիվ երևոյթներ պատճառավորում են փաստաբանության ներկա վիճակը: Պատճառներից զատ գոյություն ունեն նաև մի շարք պայմաններ ևս, որոնք չեն հանդիսանում այս երևոյթի պատճառները, սակայն այս կամ այն կերպ պայմանավորում են դրա առաջացումը և գոյությունը: Այդպիսիք են օրինակ, մեր ազգին քննորդ հոգեբանական առանձնահատկությունները, որոնք ևս ինչ-որ շափով խշընդոտում են այս ինստիտուտի կայացմանը, պետական և այլ մարմինների դեկանակար օդակների կոռումպացվածությունը, լորջ քարոզության պակասը և այլն: Հշշատակված պայմանները և պատճառները միասին կազմում են հենց քննարկով երևոյթի արդի վիճակի պատճառական բազան: Կայացած փաստաբանական ինստիտուտը և զարգացած փաստաբանություն ունենալու համար նախ և առաջ անհրաժեշտ է համար պայքար ծավալել մեր նշան, ինչպես նաև դրանցից զատ գոյություն ունեցող մի շարք պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ, իսկ եթե որոշ դեպքերում դա անհնար է, ապա գոնեւ նվազագույն շեմի հասցնելու ուղղությամբ: Այդպիսի գործունեությունը ենթադրում է ոչ միայն պետական, այլ նաև մասնավոր կազմակերպությունների ջանքերի համատեղում: Մեծ նշանակություն ունի հասարակական կազմակերպությունների՝ այդ ուղղությամբ

կատարվող աշխատանքները: Պետք է ուրախությամբ փաստենք, որ արդեն իսկ որոշակի քայլեր իրականացվել են, իսկ շատերն էլ ընթացքի մեջ են: Իրականացած քայլերից կարելի է պետք է նշել աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) և Հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը և այլն:

Ինչեւ, հոսանք, որ մնու ապագայում մեր «Հայկական Հանրապետությունում» բոլոր անհրաժեշտ քայլերը կձեռնարկվեն փաստաբանությունը զարգացնելու ուղղությամբ և դրանց արդյունքում պաշտամ մակարդակի վրա կղողվեն մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, ինչի շնորհիվ մեր պետությունը ևս մեկ քայլի դեպի զարգացած ժողովրդավարություն տանող դժվարին, բարդ, սակայն միաժամանակ նաև կարևոր ճանապարհին:

## Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀ Սահմանադրություն, Միջիքար Գոշ, 1997
- 1998թ. հունիսի 18-ի «Փաստաբանական գործունեության» մասին ՀՀ օրենք
- 2004թ. դեկտեմբերի 14-ի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- Կարծիք N 221 (2000)[1] Հայաստանի Եվրախորհուրդին անդամակցելու դիմումը

## ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Ներածություն

Փաստաբանությունը անձանց և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ և ռեալ մեխանիզմ է: Պատմականորեն, քնական երևոյթ է համարվել շահագործվողների իրավունքների խախտումը շահագործողների կողմից, և ոչ միայն... Կարելի է ասել, որ այն ժամանակ փաստացի գործում էր «ծնունդի ուժը», «զենքի ուժը», «ծանոթության ուժը», «կաշառքի ուժը» (չնայած այնքան էլ չի փոխվել այդ ուժերի դերն աշխարհում, իսկ մասնավորապես ետխորհրդային երկրներում քացառությամբ մերձբալթյան երկրների և Ֆուշչենկյան Ուկրաինայի, և այլոր գտնվում են դրանք՝ «անոր հողի վրա»), սակայն մարդկության ամենամյա գաղափարական զարգացումը համեմեցրեց նոր գաղափարների և նոր աշխարհայացքի ձևավորմանը, որի արդյունքներից մեկն է նաև փաստաբանության ինստիտուտը:

Ներկայումս դասական փաստաբանությունը Հայաստանում գտնվում է իր զարգացման փուլում, քանզի, ինչպես գիտենք, խորհրդային տարիների փաստաբանությունը այնքան էլ ննան չեր փաստաբանության, այլ կարծես թե կիսաիրավապահպան ոնն մի մարմին էր: Գաղտնիք չէ, որ փաստաբանությունը Հայաստանում կարելի է ասել գրեթե հեղինակություն չի փայելում, որի պատճառներն ըստ մեզ պետք է փնտրել թե՛ մեր մենտայիտեսի մեջ, թե՛ որոշ դեպքերում իրավապահ մարմինների և արդարադատության մարմինների որոշ անձանց թշնամական վերաբերմունքում, որը շատ դեպքերում պայմանավորված է նրանց մասնագիտական ցածր պատրաստվածությամբ:

Վերը շարադրվածները պատճառ են մեր երկրում փաստաբանության ինստիտուտի ոչ բարար կայացման, որոնք վերացնելով, նաև այլ բարենպատ պայմաններ ստեղծելով հնարավոր կիրակի փաստաբանությունը զարգացնել Հայաստանում:

### Նկարագրական մաս

Փաստաբանությունը քաղաքացիների կամավոր պրոֆեսիոնալ միավորում է, որոնք օրենսդրությանը համապատասխան գրավում են պաշտպանությանը նախնական քննության ժամանակ, քրեական գործերով դատարաններում, քաղաքացիական գործերով ներ-

## **Կայացնում են հայցվորների ու պատասխանողների շահերը, ինչպես նաև վարչական պատասխանառվության ենթարկված անձանց տրամադրում են իրավաբանական օգնություն:**

Աղփոկատ, այսինքն՝ փաստաբան ինստիտուտը լատիներենից թարգմանված նշանակում է «օգնության կանչել»: Փաստաբանությունը համարվում է ին ինստիտուտ, որին նախորդել է ընտանելիք ներկայացուցչությունը, որում ընտանիքի գլխավորը պատողն պաշտպանել է դատարանի առջև ընտանիքի անդամներին՝ կլինտներեին, որոնք որոնում էին ընտանիքի «անենահզրի» պաշտպանությունը և հովանավորությունը: Այստեղից հետևություն, որ պատողները փաստաբանների ամենից առաջին նախորդներն են, այլ խոսքով ասած՝ «մասուկ փաստաբաններ»: Հիմ Հունաստանում բացի պատողներից ու կլինտներից գոյություն ուներ նաև իրավաբանական անձանց ներկայացուցչությունը: Դրա օրինակը կարելի է համարել մենաստանները, որոնց շահերը պաշտպանում են արեղանները, որոնք ուսուցանվում են աշխարհիկ օրենքներով, այսինքն՝ ժանորանում են օրենքներին, իրամաններին և այլ ակտերին:

Միջին դարերում ի հայութեան ներկայացուցիչներ դատարաններում, որոնք համարվում էին բազավորական ընտանիքի արտոնություն, իսկ որոշ դեպքերում՝ որպես առանձնահատուկ ողորմածություն բազավորը բույլատրում էր որոշ հապատակների նույնականությունը ներկայացուցիչներ դատարաններում: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը հանգեցրեց նրան, որ ճենուերեցները կարիք ունեցան խորիդակցելու տարրեր իրավական հարցերի շուրջ պատրաստված և նյութին տիրապետող անձանց հետ, նաև որպեսզի այդ անձինը իրենց շահերը պաշտպանեն դատարաններում: Այսպիսով՝ պահանջարկ կար, և բնական է պետք է առաջանար առաջարկը, որի արդյունքը և եղակ «փաստաբան» ինստիտուտի ձևավորումը: Այնուհետև այս անձինք միավորվում են կազմակերպություններում, որոնք զբաղվում են իրավաբանների պատրաստմամբ և ուսուցմամբ: Այս հիմքով Անգլիայում 14-15-րդ դարերում առաջանում է իրավաբանների ասոցացիա, որոնք կոչվում են բարիստոններ, որոնք միանում են ոտքերի մեջ, որը անգլերներից բարզմանված նշանակում է՝ հյուրանոց: Այս կորպորացիաները գոյություն ունեն մինչև այժմ և Լոնդոնում ներկա դրությամբ կան 4 իններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սիմվոլիկան և յուրաքանչյուրը հիմնվում է իր իրավունքի դպրոցի վրա, այլ խոսքով ասած նրանք առանձին են:

Barrister ինստիտուտն առաջացել է անգլերներ բար բառից, որը նշանակում է միջնավատ: Սա պատահական չէ, այլ ունի իր պատմությունը, ավելի կոնկրետ այս տերմինը սկսեցին օգտագործել, երբ որ ոտքերի մեջ մագիստրոսին ուսանողից զանազանելու համար սկսեցին կիրառել բար անգլերներ բառը, որը և ժամանակի ընթացքում վերափոխվեց և վերածվեց barrister-ի: Այդ ժամանակներում նոյն Անգլիայում առաջացավ solicitor հասկացությունը: Նրանց միջև տարրերությունները հիմնականում կայանում են հետևյալում.

- Barrister-ը հանդիս է գալիս դատարանի առջև, իսկ solicitor-ը հավաքում է նրա համար անհրաժեշտ նյութեր,
- Solicitor-ը կատարում է զանազան իրավական հանձնարարություններ,
- Solicitor-ը հանդիս է գալիս Մագիստրոսների դատարաններում և մասնավորապես Գահի դատարանում:

Եվրոպայում 17-18-րդ դարերում ձևավորվեց այսպես կոչված «Կառավարական փաստաբանություն», որի կողմնակիցն էր Պրուսիայի բազավոր Ֆրիդրիխ 2-րդ Սեծը: Փաստաբանի պարտականությունները կատարում էին դատարանին կից և դատարանի կողմից նշանակվող պաշտոնյաներ, որոնք ստանում էին աշխատավարձ և պետությունից կենսաթոշակ և կարող էին հանդիս գալ դատարաններում, նրանց վրա տարածվում էր կարգապահական պատահանատվություն, որն իրենք կրում էր դատարանի առջև: Սակայն «Կառավարական փաստաբանություն» չստացավ անհրաժեշտ զարգացում, և այս կապակցությամբ Ֆոյնիցելին գրում է, «Փաստաբանները, վերածվելով պետական պաշտոնյայի, կորցնում են իրենց անկախությունը և ինքնուրույնությունը, որն անհրաժեշտ է հենց առաջինն իրենց, որպեսզի իրենց վտահորդների շահերը կարողանան ամուր պաշտպանել»:

Այս տեսակի պաշտպանությանը և ներկայացուցչությանը փոխարինող է գալիս ազատ մասնավորությունների տեր մարդկանց ինքնակառավարվող փաստաբանական կազմակերպություն: Այս փաստաբանությունն առաջացավ Ֆրանսիայում, չնայած 1789թ.-ի հեղափոխությունից հետո փաստաբանությունը «պարզեցվեց» 1790թ.-ի սեպտեմբերի 2-ի դեկտեմբերի և բույլատրվեց դատարանում հանդիս գալ յուրաքանչյուր անձի, բայց արդեն 1803թ.-ին փաստաբանությունը վերականգնվեց: Նապոլեոն Առաջինը չնայած պահպանեց փաստաբանությունը, բայց փորձում էր նրա իրավունքները սահմանափակել: Ինչպես և այլ բռնապետներ, այնպես

Էլ Նապոլեոնը, դրական չին վերաբերվում փաստաբանությանը, մասնավորապես 1810թ.-ի դեկտեմբերի 14-ի դեկտեմբերի ընդունման ժամանակ նա գրել է. «Փաստաբաններն ըմբռատացող-ներ են, հանցագործությունների և դավաճանությունների դերասան. քանի դեռ ես ունեմ սուր, ես երբեք չեմ ստորագրի նմանատիպ դեկրետ: Ես կցանկանայի, որպեսզի հնարավորություն լիներ կտրել այն փաստաբանի լեզուն, որը կօգտագործեր այն կառավարության դեմ»:

Այնուամենայնիվ Նապոլեոնը շկարողոցավ «փլուզեր» փաստաբանությունը և Ֆրանսիայում այն ստացավ հետագա զարգացում: Ինչպես և Անգլիայում, Ֆրանսիայում նույնպես փաստա-բանները բաժանվում էին 2 խմբի.

1. փաստաբաններ, որոնք հանդես էին գալիս դատարաններում,
2. փաստաբաններ, որոնք գրադկում էին հաճախորդներ «հավաքելով» և նախապատրաս-տում էին տվյալ գործի լաման համար դատարանում հանդես եկող փաստաբանների համար նյութեր:

Սյուիթրա Գոշի «Դատաստանագրքում» խոսվում է փաստաբանի-պաշտպանի ինստիտու-տի մասին: «Աւենաբան» հասկացության մասին առաջին անգամ խոսվում է «Որոգայր Փա-ռաց»-ում: Սա այն հայկական ճշգրիտ աղբյուրն է, որում հստակ նախատեսվում է «փաստա-բան», իսկ ավելի կոնկրետ՝ «պաշտպան» ինստիտուտը:

Հայաստանի փաստաբանության պատմության մասին շատ սակավ տեղեկություններ են հասել մեզ: Սակայն հայտնի է, որ 1922թ.-ի մայիս ամսից դատախարական համակարգի այլ մարմինների հետ զուգահեռ սկսել է գործել հայ փաստաբանների կոլլեգիան, որը մինչև 1979թ.-ը գործել է՝ դեկավարվելով ԽՍՀՄ կառավարության և արդարադատության նախարարության բազմատեսակ իրավական ակտերով: 1980թ.-ի նոյեմբերի 13-ին ստեղծվեց ՀՍՍՀ օրենքը «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունում փաստաբանական ծառա-յության կանոնադրությունը հաստատելու մասին»:

Խորհրդային տարիներին ինչպես իրավական շատ և շատ բնագավառներ գործում էին հա-կադեմնկրատական եղանակներով, օրինակ՝ պետության կառավարությունը կարող էր վերաց-նել փաստաբանների կոլլեգիայի ընդհանուր ժողովի որոշումները, ցրել նախագահությունը և նշանակել նոր ընտրություններ:

1998թ.-ի հունիսի 18-ին ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2004թ.-ի դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, որով դադարեցվեց 1998թ.-ի օրենքի գործողությունը:

2004թ.-ի դեկտեմբերի 12-ին ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքն իր 5-րդ հոդվածով սահմանում է, որ՝ «Փաստաբանական գործունեությունը իրավապաշտպան գործու-նեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրի-նական շահերի իրականացմանը՝ օրենքով շարգելված միջոցներով և եղանակներով»: Ըստ այդ հոդվածի փաստաբանական գործունեությունն իր մեջ ներառում է.

- խորհրդատվություն,
- ներկայացուցչություն, ներառյալ՝ դատական ներկայացուցչությունը,
- քրեական գործերով պաշտպանությունը:

Նոյն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ՝ «Փաստաբանն իրավունք ունի փոխիհա-տուցում ստանալու իր ծառայությունների դիմաց» և սահմանվում է նաև, թե անվճար իրավա-բանական օգնությունը որ քաղաքացիական գործերով են տրամադրվում: Ահա այդ քաղաքա-ցիական գործերը:

- այլմենայի վերաբերյալ գործերով,
- խեղման կամ առողջության այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխիհատուցման վերաբերյալ գործերով:

Այն հանգամանքները, որի ժամանակ քրեական գործերով տրամադրվում է անվճար իրա-վաբանական օգնություն, ահա այդ մասով վերը նշած օրենքը հղում է կատարում ՀՀ Քրեա-կան դատավարության օրենսգրքին:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման մասին, քացի Հայաստանի Հանրա-պետության Քրեական դատավարության օրենսգրքից, սահմանվում է նաև ՀՀ Սահմանադրու-թյամբ, «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով» և միջազգային բնույթ կրող մի շարք իրավական ակտերով: ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով սահմանվում է. «...Օրեն-քով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնություն է արվում անվճար: Յուրաքան-ցյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման, կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (Արդար դատաքննության իրավունք) 3-րդ կետի սեղման մեջ պատկանում է: «Յուրաքանչյուր մեղադրյալ, որը մեղադրվում է քրեական հանցագործության կատարման մեջ, իրավունք ունի պաշտպանվել անձանք կամ իր կողմից ընտրված պաշտպանի միջոցով կամ, պաշտպանի ծառայությունների վարձատրության համար ամբարձության միջոցներու ունենալու դեպքում, օգտվել իր համար նշանակված պաշտպանի ծառայություններից անվճար, որը անհրաժեշտ է արդարադատությանը»: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի (Իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը) 5-րդ կետով սահմանված է: «Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելեկով նրա գույքային դրույթունից»: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով (Պաշտպանի պարտադիր մասնակցությունը) սահմանվում են այն դեպքերը, երբ պարտադիր է պաշտպանի մասնակցությունը՝ կասկածյալը կամ մեղադրյալն անշափառ է, անգործունակ է, զինծառայող է և այլն, և ամենակարևորը սահմանված է 1-ին կետով՝ եթե նա այդպիսի ցանկություն է հայտնել, և նույն հոդվածի 4-րդ կետով սահմանվում է: «Քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը»: Մեր կարծիքով, այստեղ հակասություն է առաջանում Վերը նշված սկզբունքի և 69-րդ հոդվածի միջև, այսինքն՝ եթե կասկածյալը կամ մեղադրյալը աղքատ չէ սակայն հայտնել է պաշտպան ունենալու ցանկություն, բայց նաև չի ցանկանում իր սեփական միջոցներով վճարել փաստաբանին, ապա 69-րդ հոդվածով քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է ապահովի փաստաբանի մասնակցությունը: Պետք է մեր կողմից արդարացիորեն նկատվի նաև, որ աղքատության որոշման կարգն ընդհանրապես իդեալական լինելուց հեռու է Հայաստանում, քանի պատահել են դեպքեր, որ խկապես աղքատ կասկածյալն չեն տրամադրել անձար իրավաբանական օգնություն միայն այն պատճառով, որ նա որոշակի կենցաղային տեխնիկա ուներ, սակայն մյուս կողմից էլ շատ վճարունակներ օգտվում են աղքատի համար սահմանված «իրավունքից» (մեր վերջին նշանը Հայաստանում շատ քիչ է պատահել): Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է ստեղծել անձի սոցիալապես ապահոված լինելու արդի և արդյունավետ մեխանիզմ, որպեսզի մինիմումի հասցի նման կազուսները, որն այսօր Հայաստանում չկա:

ԱՄՄ Գերազույն Դատարանի մի շարք որոշումներ հաստատված են, որ պաշտպան-փաստաբանի նշանակման իրավունքը տարածվում է աղքատ և չքավոր մեղադրյալների վրա, որոնք, եթե ապացուցվի նրանց մեղքը, ապա կլրեն ազատազրկում (սա պարտադիր պայման է): Հաշվի առնելով այն փաստը, որ մոտավորապես 80% այն մեղադրյալների, որոնք մեղադրվում են ծանր հանցագործության կատարման մեջ, իրենց ֆինանսական դրույթյան պատճառով չեն կարող իրենց միջոցներով իրենց համար վարձել փաստաբան-պաշտպանի, այդ խկ պատճառով ԱՄՄ-ում գոյություն ունի անվճար փաստաբան-պաշտպանի տրամադրման 3 եղանակներ:

Ամենից հաճախ փաստաբան-պաշտպանների նշանակման ծրագրերը ստեղծվում են մունիցիալ կառույցներում, որոնք այնպիսի մեծ չեն, որպեսզի ստեղծեն իրենց ինքնուրույն «Հանրային պաշտպանների» գերատեսչություն: Տեղական իշխանությունը կազմում է գործող փաստաբանների ցուցակը, որոնք պատրաստ են ներկայացնել այն անձանց շահերը, որոնք դրա կարիքը գգում են: Փաստաբանի ընտրությունը կատարում է դատարանը՝ ընտրելով նշված ցուցակից: Սա ավելի գերադասելի է այն գործերով, որոնք պահանջում են ներ մասնագիտացում, քանի որ վերը նշված ցուցակում նշվում են նաև տվյալ փաստաբանի՝ արդեն խկ մասնագիտացված ոլորտները: Փաստաբանի ծառայությունների համար վճարն իրականացվում է դատարանի կողմից կամ Ֆենքրալ բյուջեի հաշվին, կամ նախանձի բյուջեի հաշվին, և փաստաբանը պետք է նախապես համաձայնեցնի Դատարանի հետ իր այն ծախսերը, որոնք կապված են իր կողմից տվյալ գործով ինքնուրույն քննության անցկացման հետ նաև փորձագետների իրավիրման հետ կապված ծախսերը:

Փաստաբանների ծրագրերը պայմանագրով ապահովում է գործող փաստաբանի մասնակցությունը, որը կնքում է պայմանագիր տեղական իշխանության հետ՝ հոնորարի նախապես պայմանավորված չափի վճարման մասին: Եթե աղքատ կլիենտների թիվը գերազանցում է նախորդը պայմանավորվածությունը, ապա տվյալ պայմանագրի կողմերը կարող են կնքել նոր կամ համաձայնվեն երկարաձգելու հիմ պայմանագիրը:

3. Ամենից տարածվածը այս ոլորտում «Հանրայի պաշտպանների» գերատեսչությունն է: Սրանք ստեղծվում են տեղական իշխանությունների կողմից (տարբեր նախանձներում տարբեր տեղական իշխանության տարածենակների կողմից), որոնք հսկում են այդ գերատաշության

գործունեությունը՝ չխառնվելով նրա ամենօրյա աշխատանքին: Որոշ դեպքերում այդ գերատեսչությունը նտնում է տեղական իշխանության կառուցվածքի մեջ և նրա փաստաբան-գործնկերները ֆորմալ ձևով համարվում են պետական ծառայողներ:

Ինչպես հայտնի է, ներկայում Հայաստանում ստեղծվեց մեկ փաստաբանական պալատ, որով դադարեցվեց նախկինում գործող այլ փաստաբանական միությունների գործողությունը՝ նրանք պարզապես վերակազմավորվեցին, միացան և դարձան միասնական պալատ: Աշխարհը կարծես թե շարժվում է այդ ուղղիով, բայց մի քիչ այլ կերպ: Մենք այստեղ վտանգ ենք տեսնում, որ Փաստաբանների պալատը կարող է որոշ չափով կառավարվելի դառնալ Հայաստանի իշխանությունների կողմից: Այնուամենայնիվ մենք կողմ ենք միացնանք, բայց կիրառելով ֆրանսիական մոդելը: Ֆրանսիական մոդելն իրենց ներկայացնում է հետևյալը՝ Ֆրանսիայում գոյություն ունի 181 փաստաբանական ատցանցիա, որոնք ինքնուրույն և անկախ են: Այդ «181»-ն ընտրում է Ֆրանսիայի փաստաբանների ատցանցիայի խորհուրդ, որի հիմնական գործունեությունն է՝ կոորդինացնել փաստաբանների պատրաստման ուսումնական կենտրոնները, պետական օրգանների և հասարակության առջև ներկայացնում է Ֆրանսիայի փաստաբանների կարգապահական և վարքագծային համընկանուր նորմեր: Մենք առաջարկում ենք հետևյալը՝ Հայաստանում առաջվա պես գործեն մի քանի միություններ, որոնցից կատերծվեր Փաստաբանների գլխավոր միություն, որը կլիներ հետևյալ կերպ: յուրաքանչյուր փաստաբանական միություն իր միության մեջ ընտրություն կկազմակերպեր և կրնարեր 5 անդամների, որոնցից 1-ը Փաստաբանների գլխավոր միությունում, որպես համանախազախ, իսկ այս 4-ը՝ Գլխավոր միության համապատասխան ստորաբաժանումներում: Նախագահությունը կամքեր առավել ստաժ ունեցող փաստաբանը, իսկ եթե հավասար են ստաժերով ապա նախապատվիրյունը կտրվեր տարիքով ավելի մեծին:

Ըստ մեզ՝ ՀՀ Սահմանադրության մեջ փաստաբանության վերաբերյալ առանձին գլուխ պետք է նախատեսել: Քննադատը ճիշտ կնկատի, որ աշխարհում այդպիսի հանրաճանաչ փորձ չկա, սակայն ըստ մեզ կան դրա պատճառները: Նախնառաջ դրանով արդարացիորեն կրաքարացվի փաստաբանի ինտիմուտի դերը և նշանակությունը հասարակության (միայն թե այդ ժամանակ փաստաբանները իրենց մասնագիտությունը չարժեքրկեն բարոյական տեսանկյունից ինչպես հիմնա ԱՍԽ-ում է) մեջ: Հայաստանում ամեն տարի տարբեր մասնավոր քուեր տալիս են մոտ շորս հազար իրավաբան շրջանավարտներ, որոնցից քննականարար հազիվ թե 10%-ը լինի մասնագետ: Իսկ քաջ հայտնի է, որ իրավաբան ուսանողների մեծամասնությունը ցանկանում են աշխատել դատախազությունում, ազգային անվտանգությունում և նմանատիպ այլ համակարգերում, սակայն միայն շատ քիչ մասն է ուզում աշխատել որպես փաստաբան, որովհետո շատերը չեն պատկերացնում, որ անգամ Հայաստանում փաստաբան աշխատելով կարելի է բարեկեցիկ ապրել: Ցավոք սրտի, մեր հասարակագի մեջ ընկղզմած է 2 իրարամերժ տեսակետներ.

- կաշառք չի կարելի վերցնել,
- իսկ եթե վերցնել ապա չափով վերցնել:

Այսինքն մեր հասարակությունը ընդունում է, որ կաշառք կարելի է վերցնել, բայց չափով, և շատերն իրենց նոր ձևավորվող ուսանողների մեջ արդեն պատրաստում են այն գաղափարը, որ նրանք պիտի իրավապահ մարմիններում աշխատեն, և շատ քշերն են ընտրում իրավաբնության մեջ ամենից խարիզմատիկ, «արտիստիկ», մարդասիրական, ինչ որ չափով շատ ավելի տաղանդ պահանջող ոլորտը՝ փաստաբանությունը: Ժողովրդավարական հասարակությունում պետք է իր արժանի տեղը գրավի փաստաբանը: Այսինքն, ՀՀ Սահմանադրության մեջ փաստաբանության մասին խոսելիս արդեն իսկ ենթագիտակցարար հասարակության մեջ կարմատագործի այն, որ փաստաբանի մասնագիտությունը հարգի է, այնպես ինչպես:

Մենք կցանկանայինք վերադառնալ փաստաբանական պալատի մասին և տալ մեր պատկերացումը, թե ապագա Հայաստանում, եթե փաստաբանությունը գրավի արժանի իր տեղը, ինչպես պետք է լինեն փաստաբանական պալատի ձևավորման և պալատի հետ կապված մի շարք այլ հարցեր: Մենք առաջարկում ենք հստակ ձևակերպված (միգուցե մի քիչ ուլորադեմոկրատական) նոր մոդել, յուրաքանչյուր հանայնք ունենելու է իր փաստաբանական միավորում: Տվյալ համայնքի 150 քնակիչների ստորագրության առկայության դեպքում է տվյալ համայնքի փաստաբանական միավորումից փաստաբանների թեկնածությունները ընտրվելու «Համայնքի պատվով փաստաբան» պաշտոնում: Նա համայնքի բյուջեից ստանում է աշխատավարձ, սակայն պահպանում է փաստաբանությամբ գրադիվուն իրավունքը: «Համայնքի պատվով փաստաբանի» պաշտոնում ընտրվում է այն թեկնածուն, որը հաղթում է պարզ

մեծամասնությամբ: Եթե տվյալ համայնքի որևէ բնակիչ ներգրավվում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, ապա նա, անկախ նրանից, թե տվյալ կասկածյալը վճարունակ է, թե ոչ, միանգամից ստանձնում է նրա պաշտպանությունը, բնականաբար՝ անվճար, սակայն կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի հրաժարվել նրանից: «Համայնքի պատվո փաստաբան» պաշտպանության իրականացումը խոչընթրու չի համարվում, որպեսզի տվյալ կասկածյալը կամ մեղադրյալը վճարովի կարգով օգտվի այլ փաստաբանների ծառայություններից նույն պես:

Յուրաքանչյուր մարզում միայն համայնքի փաստաբանական միավորումներից ձևավորվում է Մարզային փաստաբանական միություն, այլ փաստաբանական միություններ տվյալ մարզում չեն ստեղծվում: Մարզային փաստաբանական միությունում անցկացվող փակ և գաղտնի ընտրությունների պարզ մեծամասնական արդյունքով ընտրվում է «Մարզի գլխավոր փաստաբանը», որը կրկին պահպանում է իր իրավունքը գրադարձել փաստաբանական գործունեությամբ, նա մարզային բյուջեից ստանում է աշխատավարձ: Եթե տվյալ մարզի բնակիչները հանդես են գալիս որպես հայցվոր՝ էկոլոգիական բնույթ կրող քաղաքացիական գործերով, ապա «Մարզի գլխավոր փաստաբանն» ավտոմատ կերպով ստանձնում է նրանց ներկայացնությունը, չնայած հայցվորը կամ հայցվորները կարող են հրաժարվել նրա անվճար իրավաբանական օգնությունից նաև կարող են չհրաժարվելով օգտվել վճարովի հիմունքներով այլ փաստաբանների ծառայություններից:

Մարզային Միության անդամները հանդիսանում են Հայաստանի գլխավոր փաստաբանական միության անդամներ և առնվազն 80 փաստաբանների առաջարկությամբ դրվում է որևէ փաստաբանի թեկնածությունը «Հայաստանի գլխավոր փաստաբանն» պաշտոնի ստանձնան համար: Թեկնածուն հաղորդ է պարզ մեծամասնությամբ: Նա ավտոմատ կերպով դառնում է ՀՀ Արդարադատության Խորհրդի 3-րդ փոխնախագահը, պետական բյուջեից ստանում է աշխատավարձ:

Սիգուես սա ծայրահեղականորեն հակասում է փաստաբանության ինստիտուտի եռությանը, սակայն մենք որդեգրել ենք այն սկզբունքը, որը ժամանակին ասել է մի հույն փիլիսոփա իր սանին: «Եթե ուզում ես նվաճել գիտության բարձունքները, ապա պատրաստ եղիր, որ քեզ կկոչեն հիմար և տգես՝ շատ դեպքերում քո նոր գաղափարների համար»:

Իհարկե այստեղ շատ պրոբլեմներ կան, որոնք իրավացիորեն լրիծում են պահանջում, սակայն սա հնարավոր է զարգացնել՝ դարձնելով այն իրատեսական:

Խիստ, սակայն շատ մասնագիտական մոտեցում է ցուցաբերվում Ֆրանսիայում այն անձանց նկատմամբ, որոնք ցանկանում են դառնալ փաստաբան: Հայաստանի օրենսդրությամբ «Փաստաբան է համարվում այն անձը, որը ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում», իսկ արտոնագիր ստանալու համար անձը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն, 2 տարվա իրավաբանական ստաժ, հանձնած լինի որակավորման քննությունը և ստացած լինի համապատասխան վկայագիր: Ֆրանսիայում փաստաբանությամբ գրադարձելու հարցերը հիմնանում կարգավորվում է 1972թ.-ի դեկտեմբերի: Անձը պետք է ունենա.

- Ֆրանսիայի քաղաքացիություն,
- իրավաբանի մասնագիտությամբ դիպլոմ՝ նվազագույնը իրավունքի մագիստրոս,
- անձը չպետք է լինի դատված և չլինի այնպիսի կազմակերպության մասնակից, որը բանկ-րոտի է ենթարկվել:

Եվ այս պահանջներին համապատասխանելու դեպքում տվյալ անձը պետք է հանձնի քննություն (2 գրավոր և 1 բանավոր) Մասնագիտական պատրաստման կենտրոնում, որից հետո ուսանի այնտեղ 1 տարի, անցնի տեսական կորու և պրակտիկա և հանձնի ավարտական քննություն (1 գրավոր և 3 բանավոր): Ըստ մեզ սա ավելի արդյունավետ մեխանիզմ է, այստեղ անձը արդեն դառնում է լիարժեք փաստաբան, սակայն սրանով ամեններն չենք ուզում անզամ ակնարկած լինենք, որ Հայաստանում գործող մոդելը անձը չի կարող լիարժեք փաստաբան դառնալ, պարզապես մեզ համար ավելի ընդունելի է Ֆրանսիայի տարբերակը:

## Փաստաբանական էքիկա

Հայտնի է, որ իրավունքը չի կարող դեկավարել բոլոր հարաբերությունները, որոնց մաս են կազմում բարոյական որոշ հարաբերությունները, և այդ ժամանակ իրենց ֆունկցիաներն են

կատարում բարոյական սկզբունքները, սովորույթները, ավանդույթները, կրոնը: Արիստոտելը ներմուծեց «էթիկա» տերմինը՝ անվանելու համար այն գիտությունը, որն ուսումնասիրում է բարոյականությունը: Էթիկայի գիտության ճյուղերից է նաև մասնագիտական էթիկան: Փաստաբանական էթիկայի հիմնասյուններն են՝ ազնվությունը, կոմպետենտությունը, բարեխողությունը՝ փաստաբանական գործունեության բոլոր բնագավառներում: Հստ Պիետայովի ազնվությունն իր մեջ ներառում է ճշմարտացիությունը, սկզբունքայնությունը, անկեղծությունը: Հստ նրա փաստաբանի գործունեության մեջ ազնվությունը կայանում է նրանում, որ, եթե փաստաբանը պաշտպանում է կիլենտի իրավունքները, նա չի խախտի օրենքը և կօգտագործի փաստաբանի հայտնի պաշտպանության բոլոր իրավական նիշոցները:

Կոմպետենտականության սկզբունքը կայանում է նրանում, որ, եթե նա կիլենտին չի կարող հատկացնել բարձրորակ իրավաբանական օգնություն օրենադրությանը իր կողմից թերի տիրապետելու պատճառով, նա չետք է հանձն առնի այդ «գործը», կամ կիլենտի համաձայնությամբ ընդգրկի մեկ այլ փաստաբան, որը տիրապետում է տվյալ ողորտին, սակայն, մինչ այս, անհապաղ հայտնի կիլենտին իր ոչ կոմպետենս լինելու մասին:

Բարեխողությունը կայանում է նրանում, որ փաստաբանը պարտավոր է ջանասիրաբար և համար կերպով, առանց ծովանալու, իրականացնի այն պարտավորությունները, որ նա ստանձնել է: Պիետայովը այս կապակցությամբ մեջ է բերում մինչենդափոխական ոմն փաստաբանին, որը ասել է հետևյալը. «Փաստաբանը պետք է այն համոզունքը ունենա, որ նա ամեն անգամ կատարում է բարոյական հանցագործություն, եթե այն գործով, որի համար նա աշխատում է չի արել ամեն անհրաժեշտը, որը եղել է իր ուժերին և իշխանությանը համապատասխան: Եթե նա այս համուզմունքը ունենա, ապա նա շատ բաների կիասնի»:

Մեր կարծիքով ՀՀ Փաստաբանների պալատը կը նդունի իսկապես նաև ազգային գործադրության մասնագիրը, քանզի ներկայիս երկու միությունների «Փաստաբանի վարքագի կանոնագրերը» համապատասխանում են այն երկրների ստանդարտներին, որտեղ փաստաբանությունը, թե կայուն հիմքերի վրա է գտնվում, թե երկար պատմություն ունի: Ռուսական ինչպես ՀՀ Սահմանադրությունը պետք է կիրառել, ոչ թե չկիրառելով հայտարարել, որ օրենքը **լավ** չէ:

## Եզրափակիչ մաս

Գաղտնիք չէ, որ փաստաբանությունը Հայաստանում ներկայումս, մեղմ ասած, հեղինակություն չի վայելում հասարակության մեծամասնության մոտ: Հայաստանում փաստաբանությունը ձևավորվեց խորհրդային տարիներին, որը ոչ թե փաստաբանություն էր, այլ, մեր համոզմամբ, կիսադատախազական մի գործունեություն, որը մեծամասնությամբ ձևական բնույթ էր կրում: Անկախացած Հայաստանը փաստաբանության համար ժառանգություն էր ստացել խորհրդային փաստաբանությունը, որը 70 տարիներից ավելի իր գոյության ընթացքում հայ հասարակության մենտալիտետի մեջ ձևավորեց այն դիրքորոշումը փաստաբանության վերաբերյալ, որը մենք ներկայումս ունենք:

Հայաստանի հասարակության որոշ զանգվածը այն կարծիքին է, որ Հայաստանում փաստաբանները անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար ոչ մի դրական արդյունքի չեն կարող հասնել՝ անկախ իրենց նաև ազգային գործադրությունից և ցանկությունից: Մեր կարծիքով այս մոտեցումն առաջացած անկախացած Հայաստանի դատական-դատախազական մարմնների ստացած ժառանգությունից, որոնք, ցավոք սրտի, մինչև այժմ էլ կամ փաստաբաններին բոլոր հնարավոր և ոչ հնարավոր լծակներով «ըրեցնում են», կամ ուղղակի անտեսում են նրանց փաստացի մասնակցությունը դատաքննություններին, սակայն ճշմարտությունը չաղավաղելու համար պետք է նշենք, որ կարծես թե «սառույցը կոտրվում է»: Հայաստանը դասական փաստաբանություն ունեցավ, որն օրենքով սահմանվեց միայն 1998թ.-ի «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքով, որը բնականաբար շատ քիչ է փաստաբանության կայացման համար: Ժամանակը հենց այն է, որը պետք է մեզ, որպեսզի կայանա փաստաբանությունը Հայաստանում, որպեսզի այդ ընթացքում թե իշխանական մարմինները և թե հասարակությունը փոխեն իրենց կարծիքները փաստաբանության վերաբերյալ, և այդ գործընթացում հիմնական և գործուն մասնակցությունը բնականաբար պետք է իրականացվի Հայաստանի փաստաբանների կողմից:

Եվ վերջում, իմ այս գեկույցը կուգենայի ավարտել ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ վեհ և արդյունավետ (այն անձանց համար ովքեր կկիրառեն իրենց կյանքում)՝ Հույս, Հավատ և Մեր խոսքերով:

## Օգտագործված գրականության ցանկ

1. *Ա.Ի .Նի էօրի ա - Աճան եածօթա Օ-համա լ ի դրա էա. Էշահածանոթա Ա. Ա. լ էօթե ահ.*  
*Նաև էօ-ի ածածան 2002 ա ահ*
2. «Որդայր Փառաց» Տիտղոսաթերթ, Թիֆլիս 1913թ.
3. *ԲՆԾԵ/Ա-ի 1 Տ/Օ - Աճան եածու ահածան ի դու, լ ի դրա 2001*
4. *Աճան ի ածու ահան օք ի ի ծածան ։ ահան ահան*
5. «Հականական ապրություն
6. «Հրեական դասավարության օրենսգիրը
7. «Փաստարանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 1998թ.
8. «Փաստարանության մասին» ՀՀ օրենքը, 2004թ.

## ՊԵՐԾ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### Ներածություն

«Մարդ անհատը ծնվում է ազատ՝ օժտված բոլոր իրավունքներով ու ազատություններով»:  
Բնական իրավունքի տեսության կողմնակիցների այդ պնդումն այսօր որևէ առարկության չի հանդիպում:

Բնական բոլոր իրավունքներով և ազատություններով օժտված անհատը, դառնալով հասարակական միավոր, հարկադրված է ենթարկվել տվյալ հասարակությունում գործող վարքագծի համընդիմանուր կանոններին և նորմներին, որոնք արտահայտված են իրավական ակտերի ձևով կամ գործում են սովորույթի ուժով: Հասարակության մեջ խաղաղ և ներդաշնակ գոյակցության հիմնահարցը հարկադրում է մարդ անհատին համապատասխանեցնել իր վարքագիծը այդ համապարտադիր կանոններին, որոնք և սահմանափակում են նրա՝ բնականից ունեցած իրավունքներն ու ազատությունները: Ֆրանքացի լուսավորիչ փիլիստիա Ժան Ժակ Ռուսան գտնում էր, որ անհատը, պետությանը զիջելով իր բնական իրավունքների և ազատությունների մի մասը, ձեռք է բերում այլ իրավունքներ՝ հասարակությանը, սուվերենին զիջած իրավունքների փոխարեն. դա պաշտպանված լինելու իրավունքն է:

Մարդ անհատները, կազմելով հասարակություն, միջյանց հետ գտնվում են բազմապիսի և բազմաբնույթ հարաբերությունների մեջ, որոնց կարգավորման անհրաժեշտությունն էլ առաջ է բերում բազմապիսի և բազմաբնույթ իրավական ակտեր ու նորմեր ունենալու անհրաժեշտություն:

Հասարակական հարաբերությունները, որոնք ընդգրկում են անհատ-հասարակություն, անհատ-պետություն և անհատ-անհատ հարաբերությունները, կարգավորվում են պետության կողմից, որը այդ ֆունկցիան կատարում է՝ սահմանելով կամ սանցիշայի ենթարկելով ծագած հարաբերությունները կարգավորող վարքագծի կանոններ կամ նորմեր, և իր մարմինների միջոցով հասնում է վարքագծի սահմանված նորմերի և կանոնների պահպանմանը՝ միևնույն ժամանակ իրավունք ունենալով կիրառել սանցիշաներ և հարկադրանքի միջոցներ այդ նորմերը խախտող անձանց նկատմամբ:

Հասարակություն-անհատ հարաբերություններում մշտապես գրյություն ունի անհամաձայնություն, ինչ-որ տեղ նաև բախում, քանի որ հասարակություն կազմող անհատներից յուրաքանչյուրը ձգտում է առաջնային պլան մղել իր անհատական շահը, որը ոչ միշտ է, որ կարող է համընկնել հասարակության ընդհանուր շահի հետ: Պետությունը նման պարագայում խնդիր ունի ապահովել հասարակական և անհատական շահերի ներդաշնակությունը: Եվ իր հենց այս խնդիրն իրականացնելիս է, որ հաճախակի հասարակական շահի պաշտպանության անվան տակ իր լիազոր մարմինների և դրանց պաշտոնատար անձանց միջոցով սահմանափակում է մարդկանց իրավունքներն ու ազատությունները՝ որոշ դեպքերում նաև դուրս գալով իր կողմից իր հսկ համար սահմանված բոլյատրելի սահմանափակումների շրջանակներից:

Մարդ անհատի՝ պաշտպանության ենթակա իրավունքներն ու ազատությունները յուրաքանչյուր երկրում ամրագրվում են Սահմանադրությամբ՝ հիմնական օրենքով, և այլ օրենսդրա-

կան ու ենթաօրենսդրական ակտերով: Սահմանադրությամբ և առանձին օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների խսխումներն առանձին անհատների, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից, առաջ է բերում անհատի դժողովությունը, բողոքը, իսկ դրանց զանգվածային լինելու դեպքում հանգեցնում է ըմբռության և հասարակական ընդվկումների:

Ըստաքակիրք աշխարհի արդեն 20-րդ դարում հանգել է այս հետևողաբանյուր հասարակության ներդաշնակ զարգացման և առաջընթացի կարևորագույն երաշխիքն է մարդու իրավունքների և իմնարար ազատությունների հարգումն ու դրանց առավելագույն պաշտպանության ապահովումը: Հենց այդ սկզբունքն էլ ամրագրված է 1948 թվականին Միավորված ազգերի կազմակերպության ընդունած «Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրով», մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող միջազգային կոնվենցիաներով և ՄԱԿ-ի հաստատած մի շարք միջազգային փաստարդերով:

Մարդու իրավունքների և իմնարար ազատությունների նկատմամբ համընդիանուր հարցներ, և դրանք առաջնային արժեք ճանաչելն ու պաշտպանելն էլ հանդիսանում է այն բազիսը, որի վրա իմնակում և կառուցվում է ժողովրդավարությունը յուրաքանչյուր երկրում:

Ինչպես արդեն բազմից նշվել է, հասարակական հարաբերություններն իրենց բնույթով բարդ են և բազմապիսի: Այդ հարաբերությունների մասնակից հանդիսացող մարդ անհատը հաճախակի է բախվում իրավիճակների, երբ կարիք ունի խորհրդատվության, իրավական գիտելիքներ ունեցող հնուտ մասնագետի օգնության, մասնագետի, որը տեղյակ է օժանդակություն հայցողի համար հետաքրքրություն ներկայացնող հարաբերությունները կարգավորող վարքագծի կանոնները՝ իրավական նորմերը, և կարող է ցույց տալ հարաբերությունն ի շահ դրա մասնակցի կարգավորելու լավագույն ուղին: Նման խնդիրներ և նման ծառայությունների պահանջարկ առաջանում է ամեն օր, ամեն ժամ և իրավաբանական բավարար գիտելիքներ չունեցող յուրաքանչյուրի մոտ:

Հասարակական հենց այսպիսի պահանջարկն էլ ծնել է «փաստաբան», «փաստաբանական ծառայություն», «փաստաբանական գործունեություն» հասկացությունները:

## Փաստաբանական ծառայությունը Խորհրդային Հայաստանում

Մարդու իրավունքների և իմնարար ազատությունների պաշտպանությունը սերտորեն առնչվում է փաստաբանության հետ: Իրավունքը և ազատությունը միայն Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրելը չի կարող բավարար համարվել, եթե չեն ամրագրված դրանց իրականացման իրական մեխանիզմներ:

Խորհրդային Միությանը բնորոշ է եղել սոստալիտարիզմը, և հենց այստեղ է, որ հանրային շահերի պաշտպանվածության անվան տակ ուժնահարվել, շրջանցվել կամ ընդհանրապես անտեսվել են մարդ անհատն ու նրա իրավունքները: Խոսք չէր կարող լինել օրենքի, առավել ևս իրավունքի գերակայության մասին այն պայմաններում, երբ հասարակական հարաբերությունների իմնական մասը կարգավորվում էր ոչ թե օրենքներով, այլ կուսակցական դիրեկտիվներով, պլենումների որոշումներով, կառավարության, հաճախակի նաև գերատեսչական ակտերով: Նման պարագայում կարելի է փաստել, որ ընդհանրապես գերակայում էր ոչ թե օրենքը և իրավունքը, այլ նպատակահարմարությունը:

Հայաստանի Խորհրդային Հանրապետությունն անքաժանելի մասն էր կազմում խորհրդային համակարգի և չէր կարող ունենալ ու չի ունեցել իրավական այլ համակարգ, քան Խորհրդային Միության ընդհանուր համակարգն էր:

Մարդու իրավունքների պաշտպանությունն առաջին հերթին պայմանավորված է արդարադատության համակարգի բնույթով և արդարադատության իրականացման նպատակաուղղվածությամբ: Խորհրդային դատական համակարգը աշքի է ընկել խիստ կենտրոնացվածությամբ, եղել են նաև աստիճանակարգված ենթակայության դրսուրումներ՝ ժողովրդական դատարաններ, գերագույն դատարան իր երկու կոլեգիաներով (դրանք էին քրեական գործերի կոլեգիան և քաղաքացիական գործերի կոլեգիան), գերագույն դատարանի նախագահությամբ և պլենումով: Գերագույն դատարանն ունեցել է վարչական հսկողության ֆունկցիա ժող. դատարանների նկատմամբ, իսկ գերագույն դատարանի նախագահն իրավասու է եղել նաև բողոքարկելու ժող. դատարանների և գերագույն դատարանի կոլեգիաների վճռներն ու դատավճիռները: Խորհրդային օրենսդրության համաձայն, բոլոր դատավորները եղել են ընտրովի, և այդ հան-

գամանքը նպատակ է ունեցել դատարանի անկախության պատրամք ստեղծել: Չանի որ ընտրություն հասկացության իմաստն ամբողջովին խեղարյուրված է եղել. գործը կուսակցության կողմից դատավորի նշանակվելուց հեռու չի գնացել, և նախատեսված «ընտրությունը» ոչինչ չի նշանակել: Դատարանը չի եղել չեզոք, իրականացրել է նաև մեղադրական ֆունկցիա, ինչից առ այսօր մեր դատարանները ծերքազատվել չեն կարողանում:

Վերը նկարագրվածին պետք է ավելացնել նաև այն, որ դատախազը՝ որպես մեղադրող կողմ, դատարանում հանդիս էր գախու որպես պետական մեղադրող, իսկ մեղադրանքն էլ անվանված էր պետական մեղադրանք: Նման պայմաններում ակնհայտ է դառնում, որ պաշտպանության կողմը մնում էր միայնակ և զրկված պաշտպանվելու հնարավորությունից: Բնականարար, այստեղ ավելորդ է դառնում խոսել մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև մրցակցության մասին:

Դատախազությանը վերապահված է եղել նաև ընդհանուր հսկողության ֆունկցիա, որը ենթադրում էր դատախազության իրավասությունը ամենուր հսկողություն իրականացնելու ամեն ինչի օրինականության նկատմամբ, այդ թվում նաև դատավարության ժամանակ դատարանի կողմից օրենքների ճիշտ և միատեսակ կիրառման և դատարանների վճիռների, դատավճիռների ու որոշումների օրինականության նկատմամբ: Դատախազը մասնակցել է նաև քաղաքացիական գործերի դատական քննությանը, և նրա կարծիքը գործը քննող դատավորի համար եղել է վճռորոշ:

Այս ամենը վկայում են այն մասին, որ պետությունն իր մարմինների միջոցով, հատկապես դատախազության, ամբողջովին իր վրա էր վեցըլել արդարադատությունը և այն իրականացնում էր ոչ թե անկախ և անկողմնակալ դատարանների միջոցով, այլ վարչական մարմինների օգնությամբ:

Եվ ահա այս պայմաններում է, որ նվաստացվել և առոչինչ էր դարձվել փաստաբանի դերն ու նշանակությունը հատկապես դատարանում: «Արվոկատուրայի մասին» ԽՍՀՄ օրենքի համաձայն, 1980 թվականի նոյեմբերին Հայաստանում ընդունվել է «Արվոկատուրայի կանոնադրությունը հաստատելու մասին» օրենք, որի հիմնա վրա էլ ձևավորվել է ՀԽՍՀ փաստաբանական կոլեգիան: Համաձայն այդ օրենքով հաստատված կանոնադրության, կոլեգիան, որպես կամավոր միավորում, կարող էր ձևավորվել բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձանց կամ մինիստրների խորհրդի նախաձեռնությամբ և արդարադատության նախարարության համաձայնությամբ:

Համաձայն օրենքի, փաստաբանների կոլեգիայի ընդհանուր դեկավարումն իրականացնում էին գերազույն խորհրդությունը, նրա նախագահությունը, մինիստրների խորհրդությունը՝ ինչպես անձամբ, այնպես էլ արդարադատության նախարարության միջոցով: Ընդ որում, արդարադատության նախարարությունն իրավասու էր սահմաններու իրավաբանական օգնություն ցույց տալու կարգը, ընդունելու հնատրուկցիաներ և մերոդական ցուցումներ փաստաբանական գործունեության վերաբերյալ, կասեցնելու կոլեգիայի կամ ընդհանուր ժողովի որոշումների կատարությունը:

Նման պայմաններում փաստաբանության անկախության, վատահորդի, պաշտպանյալի շահերի լիարժեք պաշտպանության մասին անգամ խոսք լինել չէր կարող: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ այս ամենին զուգահեռ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նույնպես սահմանափակված էին փաստաբանի իրավունքները: Օրինակ՝ քրեական գործերով փաստաբանը որպես պաշտպան իրավունք ուներ նախաքննության ընթացքում գործի մեջ նտնել միայն այն պահից, եթե մեղադրային հայտարարում էին նախաքննության ավարտման մասին, և գործի նյութերը նրան ներկայացվում էին ծանոթացման:

Զեր կիրառվում նաև կանոնադրության «Նախնական կալանքի մասին» այն սկզբունքը, որ պաշտպանն իրավունք ունի անարգել առանց ժամանակի սահմանափակման տեսակցելու իր պաշտպանյալի հետ: Սրա փոխարեն գործում էր գլխավոր դատախազի հրամանը, ըստ որի, պաշտպանի տեսակցությունները իր պաշտպանյալի հետ կարող էր տեղի ունենալ միայն գործը քննող քննիչի բոլորությամբ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1990 թվականի նոյեմբերի 4-ի հրամանագրով թույլատրվել է քրեական գործերով պաշտպանի մասնակցությունը անձի ձերքակալման, կալանավորման, խափանման միջոցի ընտրման, կամ, եթե խափանման միջոց չի ընտրված, մեղադրանքի առաջարկման պահից: Սա զգայի առաջընթաց էր մեղադրյալների իրավունքների պաշտպանության և փաստաբանների հնարավորությունների ընդարձակման առումներով: Հենց սա էլ խթան հանդիսացավ փաստաբանական գործունեության աշխուժացման և փաստաբանների բարձրացման համար: Այս գործընթացներին զուգահեռ վերացվեցին նաև

պաշտպանի և անազատության մեջ գտնվող մեղադրյալի տեսակցվելու արհեստածին արգելքները:

## Փաստաբանությունը Հայաստանի նորանկախ հանրապետությունում

Մինչև 1995 թվականին ՀՀ Սահմանադրության ընդունումը «Զեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա արդարադատության նախարարության կողմից տրվում էին արտոնագրեր իրավաբանական ծառայություններ մատուցելու ցանկություն հայտնած և իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող անձաններ: Այդպիսի անձինք փաստաբանական կողեգիայի փաստաբաններին զուգահեռ իրականացնում էին փաստաբանական գործունեություն, ինչը նույնպես զգալիորեն նպաստեց այդ ծառայության մասայականացմանը:

Փաստաբանական ծառայության մասայականացմանը նպաստեցին նաև հասարակական մեծ հնչեղություն ունեցող քրեական գործերով անցկացված իրավաբակային դատավարությունները, որոնք հնարավորություն տվեցին մոտիկ անցյալում տոտալիտար հաճակարգից ձերբաստված հասարակությանը տեսնելու, որ դատարանին, դատախազին կարելի է առարկել, կարելի է դատարանում բարձրաձայն խոսել իրավունքների մասին, կարելի է մատնանշել իրավունքների խախտումները և պահանջել դրանց անհապաղ վերացումը:

1995 թվականին, եթե ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, արդեն իսկ դրվագ էին մարդու իրավունքների և իմանարար ազատությունների միջազգային հանրաճանաչ սկզբունքները սահմանադրության ամրագրելու հիմքերը:

Նոր ընդունված Սահմանադրությամբ ամրագրվեցին մարդու իրավունքներին վերաբերող այնպիսի կարեռագույն սկզբունքներ և իրավունքներ, ինչպիսիք են իրավաբանական օգնություն ստանալու և պաշտպան ունենալու իրավունքը, արդար դատաքննության պարտադիրությունը, անմեղության կանխավարկածը, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների անբույլատրելիությունը և այլն: Նմանատիպ սկզբունքների և իմանական իրավունքների՝ սահմանադրության ամրագրված լինելու հանգամանքը փաստաբանական գործունեության ընդարձակման համար ստեղծեց բավականին նպաստավոր դաշտ:

Մինչև «Փաստաբանական գործունեության մասին» օրենքի ընդունումը, արդեն իսկ որոշակիացված էին տվյալ գործունեության իմանական ուղղությունները: Փաստաբանական գործունեությունն արդեն բավականին կարևորել և որոշակիացրել էր իր տեղն ու դերը արդարադատության բնագավառում և հասարակական հարաբերությունների կարգավորմանը նպաստելու խնդրում: Եվ այս ամենը տեղի էր ունեցել մինչև Հայաստանում դատաիրավական բարփոխումների իրականացումը, մասնավորապես, մինչև քրեական և քաղաքացիական օրենսգրքերի, ինչպես նաև դատավարական օրենսգրքերի ընդունումը:

Սահմանադրությամբ դատախազությունից արդեն իսկ վերցվեց ընդիանուր հսկողության ֆունկցիան՝ դատարանում մեղադրող կողմին դնելով պաշտպանության՝ կողմի հետ հավասար դիրքերում: Դատաիրավական բարեփոխումների արդյունքում ունեցանք ընդիանուր իրավասության դատարանների եռատարկան համակարգ՝ առաջին ատյանի դատարաններ, վերաբնիչ դատարաններ (քրեական և զինվորական գործորով վերաբնիչ դատարան և քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարան) և վճռաբեկ դատարան իր երկու պալատներով՝ քաղաքացիական և տնտեսական գործերով պալատ և քրեական ու զինվորական գործերով պալատ: ՈՒնենք նաև Տնտեսական դատարան, որի իրավասությունների շրջանակը սահմանված է քաղաքացիադատավարական օրենսդրությամբ:

1999 թվականին ընդունված «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքով փաստաբանությունն անկախացվեց պետական բոլոր մարմիններից, ինչն առաջնային նշանակություն ունեցավ մեր երկրում այդ ինստիտուտի կայացման և ամրապնդման հանար: Ընդունված նոր օրենքով պարզաբնում ստացան մի շարք կարևոր հարցեր, որոնք մինչ այդ կարգավորված չեին: Մասնավորապես, այս օրենքով սահմանվեց փաստաբանական գործունեության կազմակերպման իրավական ծևը, սահմանվեցին փսատարամի գործունեության երաշխիքները և փսատարամի իրավական պաշտպանությունը, նախատեսվեց փսատաբանական միությունների ստեղծումը, և կարգավորում ստացան մի շարք այլ հարցեր:

Օրենքի հիման վրա ստեղծվեցին փաստաբանների միություններ, որոնք եկան փոխարինելու գույություն ունեցող փաստաբանների կոլեգիային և որպես անհատ ձեռներեց գրանցված իրավաբաններին: Փաստաբանների միությունների ստեղծման հիմքում դրված էր մրցակցության գաղափարը. նախատեսված էր, որ փաստաբանների միությունները պետք է մրցակցեն միմյանց հետ, և այդ մրցակցության արդյունքում հայ փաստաբանական միտքը կապի իր զարգացումը: Սակայն այդ մեխանիզմը այնքան էլ հաջող չգործեց և չարդարացրեց ակնկալիքները:

Փաստաբանների միությունների նույն վեցամյա գործունեությունը ցույց տվեց, որ փաստաբանությունը ոչ այնքան կարիք ունի միությունների միջև մրցակցության, որքան փաստաբանական ուժեղ և միասնական կառույցի, որն ի վիճակի կլինի և կկարողանա հանդես գալ փաստաբանի օրինական շահերի և հիմնավոր տեսակետների պաշտպանությամբ:

Գաղտնիք չէ, որ դատական համակարգի բարեփոխումները չեն բերել ցանկալի արդյունքի, համակարգը չի դարձել անկախ, անկողմնակալ, և փաստաբանությունը խնդիր ունի այսպարեւության դրեական հետապնդման նարմինների և դատարանի կողմից թույլ տրվող դատավարական խախտումների դեմ՝ հանուն իրավունքների պաշտպանության, հանուն օրենքների գերակայության հաստատման:

Այս պայմաններում է, որ առանձին փաստաբանը կարիք ունի իր թիկունքում ունենալ փաստաբանական այնպիսի կառույց, որն իրեն կօժանդակի իր ձայնը հասցնելու պետական այն լիազոր նարմիններին, որոնք իրավասու են զնահատական տալ քրեական հետապնդման նարմինների, դատարանի և դատավորի գործուրիյուններին: Հենց այս նպատակով է, որ գործող փաստաբանական երկու միությունների համար ջանքերի շնորհիվ 2004 թվականի դեկտեմբերին ընդունվեց նոր օրենք փաստաբանության մասին: Այս օրենքի ընդունումով հիմք է դրված փաստաբանական մեկ միասնական կառույցի՝ փաստաբանների պալատի, որին անդամագրված անձինք են միայն, որ իրավունք են ստանում գրադպելու փաստաբանական գործունեությամբ: Պալատի հիմնադիրներն են հանդիսանում գործող միությունների կողմից արտոնագրված փաստաբանները:

Կարևորագույն նորույթն այստեղ այն է, որ փաստաբանների որակավորման հանձնաժողովը, որը նախկինում ծևավորվում էր արդարադատության նախարարության կողմից, այժմ և՛ ծևավորվում, և՛ դեկավարվում է փաստաբանների պալատի կողմից: Պալատի կազմում նոր փաստաբաններ կարող են ընդգրկվել որոկավորման քննություններ հանձնելու և պալատի կողմից արտոնագրվելու դեպքում միայն: Նորույթ է նաև պալատի կազմում հանրային պաշտպանի կառույց ստեղծելը, որը պետք է ֆինանսավորվի պետական բյուջեից և կոչված է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու այն անձանց, ովքեր փաստաբանական ծառայությունից օգտվելու համար չունեն համապատասխան նյութական միջոցներ:

Օրենքը երաշխավորում է փաստաբանության լիարժեք անկախությունը և փաստաբանների խնդիրն է համարել հասնել ուժեղ և արդարադատության համակարգում իր արժանի տեղն ունեցող հաստատության ստեղծմանը:

Նոր օրենքում գագալի է փաստաբանների որակի բարձրագայանը հատուկ ուշադրություն դարձնելու նպատակառուղվածությունը: Հենց դրան է ուղղված փաստաբանի հավակնորդներից մասնագիտական որոշակի ստաժ պահանջելը, փորձնակության ինստիտուտի սահմանելլը:

Արդեն տեսանելի է նաև փաստաբանական բարձրագույց դայրոց ունենալու ծրագիր, որը կարող է դառնալ որակյալ փաստաբանների պատրաստման և ուսուցման խոշոր կենտրոն, գիտական հաստատություն, որտեղ կմշակվեն նաև օրենքների և իրավական ակտերի նախագծեր՝ այդ գործընթացներում ներգրավելով կարող փաստաբաններ:

Փաստաբանության հզորացումը չի կարող իր դրական ազդեցությունը չունենալ դատական համակարգի վրա, և քանի որ փաստաբանների պայքարը պայքար է հանուն իրավունքը պաշտպանող օրենքի գերակայության, այդ պայքարի հաջողությունը կհանգեցնի նաև իրավական և ժողովրդավարական պետության ստեղծմանը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. «Համամապարություն (ընդունված 05.07.1995թ.)

- ՀԱՅՈՐԾՈՒՐ «Աղվոկատուրայի մասին» (ընդունված 1979թ.)
  - ՀԻՄՈՐԾՈՒՐ «Աղվոկատուրայի կանոնադրությունը հաստատելու մասին» (ընդունված 13.11.1980թ.)
  - ՀԻՄՈՐԾՈՒՐԵՐՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ (ընդունված 07.03.1961թ.)
  - ՀԻՄՈՐԾՈՒՐ ՔԱՂԱՔԱԳԻՒԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ (ընդունված 04.05.1964թ.)
  - «ՓԱՍՏԱՐԱՆՆԱԿԱՆ ԳՐՈԴՈՒՅԵՇՊՐԵՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք (ընդունված 18.06.1999թ.)
  - «ՓԱՍՏԱՐԱՆՆՈՐՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք (ընդունված 14.12.2004թ.)
  - ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ (ընդունված 01.06.1998թ.)
  - ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ պալատի կանոնադրություն
  - Աճածածու, «Օքէ՛ ո՞ Օքէ՛ ի ձահա», «Լ սո՞ւ» և այլն, 1991
  - ԱՃԱՅ ԱՃԵ ԹՈՌՈՒՐ «Ի ա ի անհօգահար ի ի ահ ահ ձա», Ա. Ի ձօհածօծա, 1907 թ.
  - ԱՃԱՅ ԱՃԵ ԹՈՌՈՒՐ «Էշամար ի սա ո՞ է ա ի է յ», Լ ի ի հահա, Օ. Յ. 1961 թ.

ՀԱԿՈԲ ՔՈՅԼՈՅԱՆ

Ներածություն

Φωσταρβαնության ներկա վիճակը զնահատելու և զարգացման ճիշտ ուղիներ գտնելու համար պետք է նախ և առաջ ուշադրություն դարձնել փաստաբանության նախն ՀՀ օրենքին, որն ընդունվել է 2004 թ.-ի դեկտեմբերի 14-ին: Նոր ընդունված օրենքում առկա են նի շարք թերություններ, առավել հատկանշական է փաստաբանների պալատին պարտադիր անդամագրվելը: Փաստաբանության հիմնական սկզբունքներից է անկախությունը, որը չի պահպանվում և ուժնահարվում է փաստաբանների պալատի պարտադիր անդամագրվելու պահանջով:

Բացքողունների շարքին է դասվում նաև հանրային պաշտպանի ընտրության կարգը, այսինքն՝ անվճար փաստաբանական ծառայության կարիք ունեցող անձը չի կարող ազատ ընտրել այն փաստաբանին, ում կգերադասեր, այլ պետք է միայն ընտրի հանրային պաշտպանի գրասենյակում գրանցված փաստաբաններից, որոնց թիվը խիստ սահմանափակ է: Փաստություն մենք մեր իսկ օրենքով գրկում ենք պաշտպանի ազատ ընտրության իրավունքից:

Փաստաբանության ներկա վիճակի մասին լիարժեք կարծիք կազմել միայն օրենքի ուսումնասիրությամբ և չանդրադառնալ հասարակության կարծիքին չենք կարող, և հասարակության կարծիքը առավել պատկերավոր և ընդգրկուն ուսումնասիրելու համար պետք է նաև անդրադառնալ փաստաբանության ներկա վիճակի մասին անցկացված հարցման արդյունքներին։ Հարցման հիմնական նպատակը այն է, թե ինչքանով է հասարակությունը վստահում ներկա փաստաբաններին և ինչքանով է կայացած փաստաբանությունը ՀՀ-ում։

Φωαστωρωάνη<sup>1</sup> ανδινώκαν<sup>2</sup> χωκαφροψωδοπιργαν<sup>3</sup> ρωαρόρωαγονιμ<sup>4</sup> αρηγονινωκεντοπιργαν<sup>5</sup> ήκιδ-  
νιακαν<sup>6</sup> έρωαζυκηρ<sup>7</sup> έ: Ένχωδ<sup>8</sup> δ<sup>9</sup> ο<sup>10</sup> χωρρ<sup>11</sup> αγ<sup>12</sup> ρωαρόρωημ<sup>13</sup> έρρ<sup>14</sup> ρωαγενέληρ<sup>15</sup>, ίωλ<sup>16</sup> ϕωαστωρωάνη-  
ργαν<sup>17</sup> ή κωποιγψωρρ<sup>18</sup> φηψηκητεληρ<sup>19</sup> αγ<sup>20</sup> ψευδ<sup>21</sup>, ηρψευδ<sup>22</sup> ή κωρηηωάνηρ<sup>23</sup> ρωαρόρωαγενέλη<sup>24</sup> ϕωαστωρωάνη-  
έτηρ<sup>25</sup> αιωδινώκαν<sup>26</sup> χωκαφροψωδοπιργιτιν<sup>27</sup> αρηγονινωκετ<sup>28</sup> φηρδηινέτηπιργιτ<sup>29</sup> δωψωλετ<sup>30</sup> ίκε,  
ικιωαγ<sup>31</sup> αγ<sup>32</sup> ήρραψ<sup>33</sup> ήκιωρηηωάνηρ<sup>34</sup> ή κωατωρέλωρηρδητ<sup>35</sup> ϕωαστωρωάνηπιργιτ<sup>36</sup> έξ-<sup>37</sup> πιδ<sup>38</sup>: Πειτρ<sup>39</sup> έ  
φηντρη<sup>40</sup> ήρωρωαγ<sup>41</sup> ήνηρ<sup>42</sup> πιηθη<sup>43</sup> έρ<sup>44</sup> ήκιρωατ<sup>45</sup> ήνηρ<sup>46</sup> ήνιατηηηπιτ<sup>47</sup> έξ-<sup>48</sup> πιδ<sup>49</sup> «έρνιτωανέληκαν<sup>50</sup> ϕωαστω-  
ρωάνη<sup>51</sup>» ήνιατηηηπιτ<sup>52</sup>: Αյυ ήτραψ<sup>53</sup> ήρωράρωαγενέληρ<sup>54</sup> ϕωαστωρωάνηρ<sup>55</sup> χωκαφροψωδοπιργιτ<sup>56</sup> αρηγονι-  
νωκετ<sup>57</sup> αχ<sup>58</sup> ωκατωρέτηρ<sup>59</sup> ίκε: Ήωλ<sup>60</sup> ήστηηηδηψ<sup>61</sup> ήρρωακρωγαγ<sup>62</sup> ήωλ<sup>63</sup> ϕωαστωρωάνηέτηρ<sup>64</sup>  
ικιω<sup>65</sup>: Ήρρωακρωγιργιτ<sup>66</sup> ή<sup>67</sup> ικιωαγ<sup>68</sup> ϕωαστωρωάνηπιργαν<sup>69</sup>, αγ<sup>70</sup> ίωλ<sup>71</sup> ήρρηρ<sup>72</sup> ηηρηηηπιτ<sup>73</sup> ή κωατωρέλω-  
ρηρδημ<sup>74</sup> ήωλ<sup>75</sup> ήκιδινώκαν<sup>76</sup> έρωαζυκηρ<sup>77</sup> έ: Ήνιατωανέληκαν<sup>78</sup> ϕωαστωρωάνηρ<sup>79</sup> ήνιατηηηπιτ<sup>80</sup> ήκιρω-  
